


Արարատի մարզի Արարատ համայնքում փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Լրամշակված)



Պատվիրատու՝
Արարատի համայնքապետարան

«ԳրինԹայմ» ՍՊԸ՝
Տնօրեն՝ Ա.Հարությունյան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ	5
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ	6
4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ	10
4.1 Նախատեսվող գործունեության բնութագիրը	10
4.1.1. Էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ.....	15
4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում	16
4.1.3. Ջեռուցում և օդափոխություն.....	17
4.1.4. Էլեկտրամատակարարում	18
4.2. Շինարարության կազմակերպում	20
4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր.....	20
4.2.2. Շինարարական անձնակազմ և հիմնական մեքենա-մեխանիզմներ.....	21
4.2.3. Հողային աշխատանքներ, օգտագործվող բնառեսուրսներ.....	23
5. ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	26
5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը.....	26
5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը.....	29
5.3 Բուսական և կենդանական աշխարհ.....	30
5.4 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	32
5.5 Տարածքի բարեկարգում և կանաչապատում.....	33
5.6 Օդային ավազան.....	35
5.7 Ջրային ռեսուրսներ	37
5.8 Հողեր	37
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39
6.1 Սոցիալական գործոններ, ժողովրդագրական կազմ և բնակչություն.....	39
6.2 Բնապահպանական ազդեցություններ.....	41
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	45
8. ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ	47
9. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ	49
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	50

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԱՐԱԾՔԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ WGS-84 (ARMREF 02) ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ51	
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ	53
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ	57
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ	59
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԽԵՄԱ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ	60
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ	63
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)	65
ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ	70
ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ	72

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՄ	անհատական պաշտպանական միջոցներ
ԲԱՄ	բողոքների արձագանքման մեխանիզմ
ԲԿՊ	բնապահպանական կառավարման պլան
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարության նորմեր
ՇՄԱԳ	շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ԶևԶ	ջրամատակարարում և ջրահեռացում
ՍՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության նպատակ	Փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցում
Զեռնարկող	«Արարատի համայնքապետարան Հասցե՝ ք. Արարատ, Շահումյան պող. 34 Հեռ՝ (+374 60) 88 55 55 E-mail: ararat.municipality@gmail.com
Խորհրդատու կազմակերպություն (ՆԳՀ)	«ԳրինԹայմ» ՍՊԸ Հեռ.՝ (+ 374 93) 854 354 E-mail: greentime.arm@gmail.com
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան փող. 46
Կառուցապատման հողատարածքի ընդհանուր մակերես	4816,1 ք.մ.

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն գնահատման հաշվետվությունը մշակված է Արարատ քաղաքի Շահումյան փող. 46 հասցեում նախատեսված փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման համար, որը հանդիսանալու է տվյալ հողատարածքում առկա մարզադպրոցի տրամաբանական շարունակությունը: Տվյալ գործունեության նախաձեռնողը/պատվիրատուն հանդիսանում է ՀՀ Արարատի համայնքապետարանը: Նախատեսվող մարզադպրոցի կառուցման նախագծային աշխատանքներն իրականացվել են «ԲԻՄ ԻՆՇԵՆԻՐԻՆԳ» ՍՊ կազմակերպության կողմից:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերը մշակվել են Արարատի մարզի Արարատի համայնքապետարանի կողմից տրամադրված կադաստրային չափագրության տվյալների հիման վրա: Արարատի համայնքապետարանի կողմից ընթանում են հողահատկացման աշխատանքներ՝ ուղղված սեփականության նոր վկայականի ձեռք բերմանը, որի կապակցությամբ համայնքապետարանն ունի նաև ՀՀ կառավարության համաձայնությունը՝ Շահումյան փող. 46 հասցեի հողատարածքի ընդլայնման համար: Համաձայն պատվիրատունի տրամադրած տվյալների, սեփականության վկայականը ներկայումս ձեռք բերման փուլում է և ըստ նոր իրականացված կադաստրային չափագրության արդյունքների տարածքի ընդհանուր մակերեսը կազմելու է 4816.1ք. մ., որը հիմք է հանդիսանում նոր վկայականի ձեռք բերման համար և նախագծային լուծումները տեղակապվել են համաձայն կադաստրային չափագրության:

Նախագծային լուծումների մշակման համար հիմք են հանդիսացել.

1. Արարատի համայնքապետարանի կողմից 07.08.2023թ. տրված N 79/2 նախագծման թույլտվությունը,
2. Արարատի համայնքապետարանի կողմից տրամադրված տվյալները հողամասի կադաստրային հանույթի և չափագրության վերաբերյալ,
3. Արարատի համայնքապետարանի կողմից տրամադրված ինժեներա-երկրաբանական հանույթը /արխիվ/
4. Պատվիրատուի առաջադրանքը՝ պայմանավորված համապատասխան հատակագծային ու ծավալատարածական լուծումներով,
5. ՀՀ ու գործող օրենքներն ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերը:

Նախատեսվող տվյալ գործունեության իրականացումը ենթադրում է բնապահպանական ազդեցության գնահատման իրականացում՝ համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների: Մարզադպրոցի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) համաձայն, Արարատ քաղաքի Շահումյան փողոց 46 հասցեում նախատեսված մարզադպրոցի նախագծային փաստաթղթերը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվել է ՀՀ օրենսդրության, մեթոդական և կարգավորող ընթացակարգերի պահանջներին համապատասխան՝ օգտագործվելով հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը և դրա իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը,
- նախատեսվող գործունեության տարածք դաշտային այցերի ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- տվյալ տարածքի վերաբերյալ վերլուծությունները, քարտեզները, լուսանկարները:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մշակում,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվության ներկայացում (ներառյալ՝ հանրային լուսման արձանագրությունն ու մասնակիցների ցանկը) Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, իրավական այլ ակտերից և կառավարության մի շարք որոշումներից:

ՀՀ Սահմանադրության (2015) 12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման վերաբերյալ՝ դեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

Ստորև ներկայացված են շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ.

➤ ՀՀ օրենքներ

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - բաղկացած է ՀՀ-ում տարբեր բնույթի ծրագրերի և գործունեությունների համար ՇՄԱԳ-ի գործընթացի հիմնական քայլերից: Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման «հայեցակարգերի» պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար:
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999)
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:
- «ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական,

արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

- «ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002)
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշմամբ (Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին Կառավարության որոշում, 30.01.2003) սահմանվում են վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման պայմանները և կարգավորվում են դրա հետ կապված հարաբերությունները:
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:
- «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք
- «ՀՀ անտառային օրենսգիրք» (2005)
- «ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006)
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)
- «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

➤ **ՀՀ կառավարության որոշումներ**

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- **ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին եվ տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1318-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»**

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել նաև ՀՀ կառավարության 25.09.2014թ. «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա, և կառավարության 10.12.2015թ. նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ <http://www.env.am/> ինտերնետային էջում)։

➤ **Միջազգային համաձայնագրեր.**

- «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
- «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթոշունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)

- «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-Շանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել):

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառկումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 «Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին» N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակը (2013թ.) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

4.1 Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արարատ քաղաքի Շահումյան փողոց 46 հասցեում: Նախագծված փակ ունիվերսալ մարզադահլիճն իր օժանդակ շինություններով, ամբողջությամբ տեղակայված է լինելու վերոհիշյալ տարածքում, որի ընդլայնված տարածքի ընդհանուր մակերեսը՝ համաձայն կադաստրային չափագրության տվյալների, կազմելու է 4816.1ք. մ.:

Ներկայումս տվյալ հողամասի համար բացակայում է սեփականության վկայականը, չնայած որ նախագծային լուծումները տեղակայվել են համաձայն կադաստրային չափագրության: Համաձայն Արարատի համայնքապետարանի 0080 գրության, սեփականության վկայականը ներկայումս ձեռք բերման փուլում է և համայնքապետարանի կողմից ընթանում են հողահատկացման աշխատանքներ՝ ուղղված սեփականության նոր վկայանի ձեռք բերմանը, որի հետ կապված առկա է նաև ՀՀ կառավարության համաձայնությունը: Ըստ նոր իրականացված կադաստրային չափագրության տվյալների տարածքի ընդհանուր մակերեսը կազմելու է 4816.1ք. մ.:

Տվյալ տարածքի և դրանում գոյություն ունեցող շինության կոորդինատային տվյալները՝ WGS-84 ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով բերված են սույն հաշվետվության [հավելված 1](#)-ում:

Նախագծային լուծումներն իրականացվել են այնպես, որ նախատեսվող շինությունը հանդիսանա արդեն իսկ գոյություն ունեցող գործող մարզադպրոցի շենքի տրամաբանական շարունակությունը: Փակ ունիվերսալ մարզադահլիճը տեղակայված կլինի Արարատ համայնքի կենտրոնական մասում, չափագրված հողատարածքի «հյուսիսային» հատվածում:

Գոյություն ունեցող մարզադպրոցի զբաղեցրած մակերեսը 476 ք.մ. է, որը կազմում է չափագրված հողատարածքի ընդհանուր մակերեսի 9.9%-ը: Տարածքի հարևանությամբ տեղակայված են բնակելի և հասարակական շինություններ:

Նախագծային լուծումների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի կողմից ներկայացված նախագծային առաջադրանքը և Արարատի համայնքապետարանի կողմից N 79/2 նախագծման թույլտվությունը՝ տրված 07.08.2023թ. (ճարտարապետահատակագծային առաջադրանքը բերված է [հավելված 2](#)-ում), Արարատի համայնքապետարանի կողմից տրամադրված տվյալները հողամասի կադաստրային հանույթի և չափագրության վերաբերյալ:

Նոր մարզադահլիճի շենքը նախատեսվում է կառուցել կից գործող մարզադպրոցի շենքին՝ նրա արտաքին պատից 1500 մմ հեռավորության վրա: Նշված պատը խուլ է չունի որևէ բացվածք, պատի նյութը տուֆե քարե է, սվաղված ց/ա սվաղով, բարձրությունը 7.8մ, տանիքածածկը ցինկապատ պրոֆիլավոր թիթեղ, վերնածածկը հավաքովի ծածկի է/բ սալեր: Ներկայումս հողատարածքի և դպրոցի միջև առկա է գրունտային ճանապարհ 3800 մմ լայնությամբ: Տարածքում առկա է կենցաղային կոյուղի և ջրագիծ, որոնց նախատեսվում է միացնել նոր կառուցվող մարզադահլիճի արտաքին ցանցերը:

Տարածքի անջրնաջրերի հավաքման և հեռացման ցանցը նախատեսվում է միացնել Շահումյան փողոցում առկա անձրևաջրերի հեռացման ցանցին:

Նախատեսվող գործունեության տարածքը տրանսպորտային մոտեցմամբ հարում է Շահումյան փողոցին: Տարածքի իրադրության սխեման բերված է [հավելված 3](#)-ում, համաձայն որի ամենամոտ գտնվող շինությունը մոտակա դպրոցն է, որը տեղակայված է գործունեության տարածքի սահմանագծից մոտ 16մ հեռավորության վրա: **Գործունեության տարածքի իրադրային սխեման՝ հարակից շենք-շինությունների և հողօգտագործումների վերաբերյալ տվյալներով ևս արտացոլված է հավելված 3-ում (տես՝ էջ 57):**

Փակ ունիվերսալ մարզադահլիճի նախագծային լուծումները հիմնվել են ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի վրա, մասնավորապես.

- ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»,
- ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն»,
- ՀՀՇՆ 20.04 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն»,
- ՀՀՇՆ II-0.00-2006 «Հակահրդեհային անվտանգություն. նախագծման նորմեր»,
- ՀՀՇՆ VI 13.102-99 «Բետոնյա և երկաթբետոնյան կոնստրուկցիաներ»,
- ՇՈՒՍՊ 2.01.07-85 «Բեռնվածքներ և ազդեցություններ»,
- ՇՈՒՍՊ 2.03.11-85 «Շինարարական կոնստրուկցիաների պաշտպանություն կորոզիայից»,
- ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար»
- ՇՈՒՍՊ 12-01-2004 «Շինարարության կազմակերպում»,
- Այլ նորմեր և կարգավորումներ:

Կոնստրուկտորական լուծումներ: Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Համաձայն նախագծային լուծումների փակ ունիվերսալ մարզադահլիճն իրականացվելու է երկաթ-բետոնյա կարկասային կոնստրուկտիվ համակարգով: Կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է՝ լայնակի շրջանակներով և արտաքին միաձույլ պատերով՝ երկու միաձույլ աստիճաններով և հարթ հատակով և տանիքով սալերով: Երկայնական ուղղությամբ առանցքների թեքությունը 3.0 մ և 6.0 մ է: Լայնակի ուղղությամբ առանցքի քայլը 6.0 մ է:

Շենքի տարածական կոշտությունն ու կայունությունն ապահովվում է ուղղահայաց կրող կառույցների (պատեր, սյուներ, աստիճաններ) և կոշտ սկավառակներ կազմող հարթ կոշտ ծածկի սալերի համատեղ աշխատանքով, շրջանակային հիմնակմախքը վերգետնյա հարկերով է:

Շենքի կրող և պատող կոնստրուկցիաները արտաքին մոնոլիտ պատերն են՝ 250 մմ հաստությամբ, իրականացված B25 դասի բետոնից և պատված 150 մմ հաստությամբ ջերմամեկուսիչ շերտով՝ հանքային բամբակի սալերով /ГОСТ 9573-96/: Ճակատի հետագա երեսպատումը նախատեսված է մանրաթելային ֆիբրոցեմենտային

գործարանային ներկված սալերով: Սյուները երկաթբետոնից են՝ 400x400մմ հատվածքով:

Ծածկերը մոնոլիտ ե/բ սալերեն են, հարթ, 200 մմ հաստությամբ ջերմամեկուսիչ շերտով, որպես ջերմամեկուսացում նախատեսված են էքստրուդացված փրփրապոլիտիրոլային սալեր՝ համաձայն ԴՕՇՏ 32310-2020-ի: Մարզադահլիճի վերնածածկը նախատեսված է պոլիմերային ՊՎԲ ծածկույթով ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից, գոլոշիամեկուսիչ թաղանթից, ջերմամեկուսիչ հանքային բամբակե շերտից՝ 100 մմ, և էքստրուդացված փրփրապոլիստիրոլի շերտից՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Ճարտարապետական լուծումներ: Ճարտարապետական լուծումները ընդունվել են շինարարության ընդհանուր ստանդարտների, սանիտարական ստանդարտների, ինչպես նաև հրդեհային անվտանգության ստանդարտների պահանջներին համապատասխան: Բոլոր լուծումները համապատասխանում են նաև էներգաարդյունավետության ժամանակակից պահանջներին և շենքի հասանելիության պահանջներին՝ բնակչության սակավ շարժունակ/հաշվանդամ խմբերի համար:

Նախագծված մարզադահլիճն ունի վերսալ շինություն է՝ նախատեսված հանրապետական նշանակության մրցումներ անցկացնելու համար: Այն բաղկացած է մարզադահլիճից և նրան օժանդակող շինությունից, որոնք կազմում են մեկ ընդհանուր արդյունություն՝ հանդիսանալով իրար շարունակություն և ունենալով միևնույն լայնությունները:

Մարզադահլիճը նախատեսված է լինելու ուսումնական և ուսումնամարզական պարապմունքների և հանրապետական մակարդակի մինի ֆուտբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի մրցումների համար, որտեղ նախատեսված են նաև տարածքներ մարտարվեստի և ծանրամարտի համար:

Համաձայն պատվիրատուի առաջարկության հիմնական մարզաձևը բասկետբոլն է, որի համար մարզադահլիճը նախատեսվում է զինել անհրաժեշտ գույքով և մարզման սարքերով:

Շենքի կառույցների (ծածկույթների ֆերմաների) հատակի բարձրությունը 8.0 մ է:

Մարզադահլիճում նախատեսված են 5 շարք նստատեղեր՝ ընդհանուր 500 տեղով, ինչպես նաև տրիբունայի հատված:

Մարզադահլիճին կից տեղակայված է նրան սպասակող օժանդակ հատվածը, որը պայամանականորեն կարելի է անվանել վարչական հատված, որտեղ տեղակայված են լինելու բոլոր այն սենքերը, որոնք անհրաժեշտ են մարզադահլիճի ֆունկցիոնալ գործելու համար: Օժանդակող հատվածը երկհարկ է, առաջին հարկի մակարդակից դեպի երկրորդ հարկ ուղղահայաց շարժման համար նախատեսված են երկու աստիճանավանդակներ՝ 1.2 մ լայնությամբ, որոնք ունեն 1.2մ բարձրությամբ շարունակական բազրիքներ: Աստիճանների միջև հեռավորությունը 0.41 մ է, թեքությունը 1:2:

Մարզադահլիճի շենքի այս օժանդակ հատվածում տեղակայված են լինելու.

- սահմանափակ հնարավորություններով անձանց համար նախատեսված մազարսրահ՝ համապատասխան սարքավորումներով,
- ծանրաձողի մարզարսրահ՝ ուսումնական պարապմունքների անցկացման համար,
- բռնցքամարտի մարզարսրահ
- տրենաժոռի մարզարսրահ,
- մարզիչների սենյակ՝ համապատասխան սանհանգույցով և լոգարանով,
- հանդերձարաններ՝ աղջիկների և տղաների համար, համապատասխան սանհագույցներով և լոգախցիկներով,
- առանձին սանհագույցներ՝ նախատեսված սահմանափակ հնարավորություններով անձանց համար, ըստ սեռերի:
- մարզագույքի պահեստ՝ կախված մարզաձևից,
- բուժկետ,
- ինժեներական սենյակներ, ինժեներատնտեսական բլոկ:

Հանդերձարանները փակված են միջանցքով, ինչը թույլ է տալիս բացառել մարզիկների և հանդիսատեսի հոսքերի հատումը:

Նախագծված մարզադահլիճի (ներառյալ՝ կից սպասարկող օժանդակ հատվածը) զբաղեցրած մակերեսը կազմում է 2133 ք.մ:

Մարզադահլիճի համար ընտրվել են սպորտային դահլիճի առավելագույն չափերը՝ պրոֆեսիոնալ մրցումներ անցկացնելու համար:

Մարզադահլիճը նախագծված է մուտքի ճանապարհներով և կոմունալ հարմարություններով, որոնք ապահովում են ողջ շենքի կենսական գործառույթները:

Փակ ունիվերսալ մարզադահլիճի բոլոր տարածքներն ապահովված են անհրաժեշտ թվով ապակենտրոնացված տարհանման ելքերով՝ հազեցած թեքահարթակներով, համաձայն գործող ստանդարտների, ներառյալ՝ սահմանափակ հնարավորություններով անձանց (ՍՀԱ) համար: Տարհանման ելքերի ուղիների պատերի, հատակների և առաստաղների հարդարումը նախատեսվում է կատարել ոչ այրվող նյութերից՝ համաձայն հրդեհային անվտանգության պահանջների: Դեպի տանիք ելքն ապահովվվելու է արտաքին ուղղահայաց հրշեջ սանդուղքներով:

Նախագիծն իրականացված է բոլոր սեյսմիկ և հակահրդեհային նորմերին համապատասխան:

Շենքի սպասարկման և երկարակացության համար տրված են արդյունավետ լուծումներ: Շենքն ապահովված են լինելու ժամանակակից նորարական լուծումներով՝ հակահրդեհային, հակաառևանգման համակարգեր, հաշվանդամների կանչի կոճակների տեղադրում՝ դրսից սեղմելու հնարավորությամբ, դռների ու դահլիճների փեղկերի ավտոմատ բացման-փակման հնարավորություններ, տանիքների վրա շանթարգելների տեղադրում:

Ներքին և արտաքին հարդարման համար կիրառվող բոլոր նյութերը գերժամանակակից են, գործարանային արտադրության, սերտիֆիկացված և էկոլոգիապես անվտանգ: Արտաքին հարդարման նյութերն ապահովված են գերժամանակակից մեմբրանային ծածկերով, ինչը թույլ է տալիս ապահովել մարզադահլիճի ձայնամեկուսա-

ցումը: Շինության արտաքին հարդարումը նախատեսված է ֆիբրոցեմենտե գործարանային արտադրության գունավոր սալերով, որոնց գունավորումն ընտրվել է պատվիրատուի հետ համատեղ: Այդ սալերը ժամանակի ընթացքում չեն խամրում: Ֆասդները օդափոխվող են և տաքացվող:

Ամբողջ տարածքը ցանկապատված և առանձնացված է լինելու, իսկ շենքի ձայնամեկուսացումը բավականին բարձր է, ինչի արդյունքում ներսում անցկացվող մրցումները որևէ կերպ չեն կարող խանգարել հարակից դպրոցում ընթացող դասապրոցեսին:

Նախատեսվող գործունեության ճակատային համայնապատկերը ներկայացված է ստորև բերված նկար 2-ում:



Նկար 2: Նախատեսվող մարզադահլիճի ճակատային տեսքերը

Նախատեսվող գործունեության վերաբերյալ որոշ ընդհանուր տեխնիկական ցուցանիշներ բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեխնիկական ցուցանիշներ

ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԻԱՎՈՐ	ԾԱՎԱԼ
Ընդհանուր ցուցանիշներ		
Հողատարածքի մակերես	մ ² (%)	4816.1 (100%)
Կառուցապատման մակերես, ներառյալ՝ <ul style="list-style-type: none"> ▪ փակ մարզադահլիճ՝ վարչական մասով (2070 մ²) ▪ արտաքին հարթակներ և շքամուտքեր (63 մ²) 	մ ² (%)	2133 (44.3%)
Գոյություն ունեցող մարզադահլիճ	մ ² (%)	476 (9.9%)
Բարեկարգման և կանաչապատման ընդհանուր մակերես	մ ² (%)	2207.1 (45.8%)

Տարածքում առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման, հետևաբար նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Տրանսպորտային մոտեցումները դեպի նախատեսվող գործունեության տարածք ապահովվելու է Շահումյան և Աբովյան փողոցներից: Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագիծը բերված է [հավելված 4](#)-ում:

Նախագծային լուծումների համաձայն փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցապատումից ազատ տարածքները նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:

Բարեկարգման աշխատանքները ներառում են ռելիեֆի կազմակերպում հեղեղատարի տեղադրմամբ, ավտոճանապարհների և մայթերի կառուցում ու բարեկարգում, տեղանքի հարավային մասում բաց մարզահրապարակների (բասկետբոլի խաղահրապարակ, բադմինտոնի մարզադաշտ) ստեղծում, բացօդյա կայանատեղիների կազմակերպում՝ նոր մարզադահլիճից դեպի արևելք:

Տարածքի կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Բակային հատվածն ապահովված է լինելու կանաչապատ միջավայրով՝ տարբեր դեկորատիվ ծառերի և թփերի համադրմամբ, հանգստի և մարզական գոտիներով, խաղահրապարակներով, ճեմուղիներով, որոնք կապահովվեն առողջ և ներդաշնակ միջավայր:

Կանաչապատված տարածքը նախատեսվում է լուսավորել արտաքին լամպերով, որոնք ապահովվելու են արհեստական լուսավորության ստանդարտ մակարդակ:

4.1.1. Էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներ

Մարզադահլիճի շենքերը նախատեսվում է իրականացնել բարձր էներգաարդյունավետության հիմնական մեթոդների կիրառմամբ: Շինության էներգաարդյունավետությունը համապատասխանեցվել է ՀՀ կառավարության 25.12.2014թ. N1504-Ն որոշման «Պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության եվ էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների կիրառման մասին» պահանջների, ինչպես նաև ՀՀ կառավարության 12.04.2018թ. «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին:

Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են ջեռուցման համակարգերին, տաք ջրամատակարարման համակարգերին, օդի լավորակման համակարգերին, ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը, ինչպես նաև լուսավորության համակարգերին:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության ուղղությամբ, ի թիվս այլոց, նախատեսվում են իրականացնել համալիր միջոցառումներ երեսապատման համակարգի, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանների և վիտրաժների տեղադրման, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացման ուղղությամբ:

- Էներգախնայողության նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.
- բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում խողովակաշարերի և օդատարների համար՝ ջերմային կորուստների նվազեցման նպատակով,
 - արտաքին կոնստրուկցիաների և օդատարների ջերմամեկուսացում,
 - ջերմային կորուստների նվազեցման նպատակով բարձր արդյունավետության ջերմամեկուսիչների կիրառում,
 - օդափոխության համակարգում բարձր արդյունավետությամբ դեկավարվող ջերմափոխանակիչների կիրառում:

4.1.2. Ջրամատակարարում և ջրահեռացում

Նախատեսվող սպորտդահլիճի ջրամատակարարման և ջրահեռացման նախագիծն իրականացվել է պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի և ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների համաձայն, որում հաշվի են առնվել նաև շահագործման ընթացքում հրդեհանվտանգության պայմանները: Ջրամատակարարման և ջրահեռացման նախագծի համար հիմք են հանդիսացել նաև.

- ճարտարապետա-շինարարական գծագրերը և գլխավոր հատակագիծը,
- տեղանքի տոպոգրաֆիական հանույթը,
- տարածքի ինժեներա-երկրաբանական և երկրաֆիզիկական հետազոտությունների արդյունքները:

Ջրամատակարարման աղբյուրը գոյություն ունեցող 100 մմ տրամագծով ջրամատակարարման քաղաքային ցանցն է, իսկ կոյուղին նախատեսվում է միացնել տարածքի հարևանությամբ անցնող DN = 350 մմ կոյուղու արտաքին ցանցին: Կեղտաջրերի բոլոր ընդունիչներն ունեն հիդրավիկ փականներ (սիֆոններ):

Կենցաղային կեղտաջրերի ծախսերը որոշվել են ջրի սպառողների քանակով, ջրի սպառման ստանդարտներով, տեղադրված սանիտարական սարքերի քանակով և դրանց շահագործման հավանականությամբ՝ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի:

Ինժեներական լուծումները ներառում են՝

- խմելու-տնտեսական սառը և տաք ջրամատակարարումը,
- տնտ. կենցաղային կոյուղին:

Ջրամատակարարումը մուտքագրված է մեկ գծով՝ կենցաղային և խմելու կարիքների համար ջրամատակարարումը մուտքագրվում է Dn=63 մմ, հակահրդեհային կարիքների համար լրացուցիչ ջրամատակարարումը մուտքագրվում է Dn=63 մմ :

Արտաքին ջրամատակարարման ցանցերը նախագծված են պոլիէթիլենային ճնշման խողովակներից PE100 SDR11 110x10 և 63x5.8՝ համաձայն ԳՕՍՏ 18599-2001:

Հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի: Արտաքին և ներքին հրդեհաշիջումն իրականացվելու է քաղաքային ջրամատակարարման ցանցից:

Շենքի արտաքին հրդեհաշիջումը նախատեսվում է իրականացնել երկու հակահրդեհային հիդրանտներից՝ 15 լ/վ թողունակությամբ: Շենքում ներքին հրդեհաշիջումը 1x2,6 լ/վրկ է, որը նախատեսվում է ապահովել DN 50 մմ

հակահրդեհային հիդրանտներից, (հրշեջ գուլպանի երկարությունը՝ 20 մ, հրշեջ վարդակի ծայրի տրամագիծը՝ 13 մմ):

4.1.3. Ջեռուցում և օդափոխություն

Նախատեսված մարզադահլիճի ջեռուցումն ու օդափոխության համակարգերի տեխնիկական նախագիծը կատարվել է համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծման առաջադրանքի և ՀՀ գործող շինարարական հետևյալ նորմերի և կանոնների հիման վրա.

- ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում»,
- ՀՀՇՆ 24-01- 2016 «Շենքերի ջերմային պաշտպանություն»,
- ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն»:

Մարզադահլիճը նախատեսվում է ջեռուցել և օդափոխել այդ նպատակով նախատեսված 220 կՎտ հզորությամբ էլեկտրական կաթսայով՝ իր ավտոմատ կառավարման վահանակի հետ միասին, որը չի սնուցվում ընդհանուր էլեկտրական վահանակից և միանում է էլ. ցանցին առանձին ճյուղով: Ջեռուցման համակարգերի հիմնական խողովակաշարերը և օդափոխման բլոկների ջերմամատակարարման համակարգի խողովակաշարերը ջերմամեկուսացված են:

Տաք ջրամատակարարման համակարգի ջերմամատակարարման աղբյուրը 90 կՎտ հզորությամբ մինի EKT-90MR էլեկտրական կաթսայատուն է, կաթսայի ելքում հետևյալ պարամետրերով.

- $A_i = 85/60^{\circ}\text{C}$, իսկ ճնշում $P=2,0$ բար,
- գնահատված ջերմային հզորությունը 81 կՎտ ($Q_{\max} = 1,17 \text{ մ}^3 / \text{ժ}$):
- տաք ջրամատակարարման համար տարեկան ջերմային սպառումը կազմում է 205.24 Գկալ/տարի (238,7 ՄՎտ):

Մինի էլեկտրական կաթսայատունը տեղակայված է անհատական ջեռուցման համար ներկառուցված առանձին սենյակում՝ 2.55x5.8 մակերեսով, որը գտնվում է մարզադահլիճը սպասարկող վարչական հատվածի առաջին հարկում:

Կաթսայատանը նախատեսվում է.

- ջերմային էներգիայի արտադրում և բաշխում,
- ջերմային էներգիայի կոմերցիոն հաշվառում,
- ջեռուցման և օդափոխության համակարգերի ուղղակի միացում ջեռուցման - ցանցերին.
- EKT-90MR մինի էլեկտրական կաթսայի տեղադրում՝ $t=65^{\circ}\text{C}$ -ից տաք ջրի պատրաստման համար՝ տաք ջրամատակարարման կարիքների համար՝ օգտագործելով ափսե ջերմափոխանակիչ,
- տաք ջրամատակարարման կարիքներին մատակարարվող ջրի ջերմաստիճանի կարգավորում,

- կաթսայի վառարարին անջատում 95°C-ից բարձր գերտաքացման ժամանակ: Երբ հովացուցիչ նյութը սառչում է մինչև 70°C, համակարգը անցնում է նորմալ աշխատանքի,
- ջերմային սպառման համակարգերում ստատիկ ճնշման պահպանում,
- ջերմասպառման համակարգի պաշտպանությունը ճնշման կամ ջրի ջերմաստիճանի բարձրացումից թույլատրելի պարամետրերը գերազանցելու վտանգի դեպքում,
- հովացուցիչ նյութի պարամետրերի վերահսկում:

Էլեկտրական կաթսանները հագեցած են ավտոմատացման ազդեցատներով: Ավտոմատացման և կառավարման գործիքներն ապահովում են անհատական ջեռուցման կետի շահագործում՝ առանց մշտական սպասարկման անձնակազմի:

Կաթսայատունը համալրված է շրջանառության պոմպով, ընդարձակման բաքով, անվտանգության փականով, կառավարման բլոկով, էներգաբլոկով, 3 հզորության մակարդակով ջեռուցման տարրի բլոկով, հեշտ կառավարելի է, անվտանգ և չի պահանջում սպասարկող անձնակազմ:

4.1.4. Էլեկտրամատակարարում

Մարզադահլիճի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել շինարարական հատակագծերի և ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան, որի հետ կապված մշակված են համապատասխան նախագծային լուծումները:

Մարզադահլիճի էլեկտրամատակարարման նպատակով նախատեսվում է 0,4կՎ նոր մալուխի անցկացնում ստորգետնյա եղանակով՝ ենթակայանից մինչև բաշխիչ ցանց:

Էլեկտրական ընդունիչները սնուցվում են 380/220 Վ ցանցից՝ TN-C-8 հողակցման համակարգով: Էներգամատակարարումն իրականացվում է ռադիալ շղթայի համաձայն, որն ապահովում է հզորության բարձր հուսալիություն: Ընդունված սխեման ապահովում է էլեկտրամոնտաժային աշխատանքների և շահագործման անվտանգությունը, ինչպես նաև լարման նվազագույն կորուստները:

Էլեկտրամատակարարման համակարգում նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- էներգաարդյունավետ լույսի լուսատուների օգտագործում (LED լամպեր),
- էլեկտրական բեռնման կենտրոններում էլեկտրաէներգիայի բաշխման կետերի տեղադրում,
- բաշխիչ ցանցերում մալուխների խաչմերուկների ընտրությունը ըստ թույլատրելի հոսանքի և ստուգում՝ ըստ թույլատրելի լարման կորուստների, որը համապատասխանում է բաշխիչ ցանցերում էլեկտրաէներգիայի նվազագույն կորուստներին.

- պղնձե հաղորդիչների օգտագործումը, որը նվազեցնում է էլեկտրաէներգիայի կորուստները լարերում և կոնտակտային միացումներում.
- միաֆազ հոսանքի ընդունիչները միացված են սիմետրիկորեն փուլերով, ինչը նվազեցնում է հոսանքը չեզոք մետաղալարում և հանգեցնում է էլեկտրաէներգիայի կորուստների նվազմանը,
- պղնձի և արծաթի կոնտակտներով ժամանակակից անջատիչ սարքերի և էլեկտրամոնտաժային արտադրանքների օգտագործում, որոնք համապատասխանում են ՀՀ ստանդարտներին և նվազեցնում են էլեկտրաէներգիայի կորուստները ցանցերում:

Համաձայն ՀՀՇՆ «Բնական և արհեստական լուսավորություն» նախագիծը նախատեսում է ընդհանուր աշխատանքային և տարհանման լուսավորության ցանց: Էվակուացիոն լուսավորության լուսատուները առանձնացված են աշխատանքային - լուսավորության լուսատուներից և կարող են օգտագործվել վթարային լուսավորության համար: Համաձայն ՀՀՇՆ «Հասարակական շենքեր» նախագծման կանոնների՝ ընդունված է լամպեր տեղադրել սպորտդահլիճի առաստաղի վրա՝ առնվազն 40° պաշտպանիչ անկյունով երկայնական և լայնակի հարթություններում:

Գնդակային սպորտի համար նախատեսված սրահներում ապահովված են պաշտպանիչ ցանցով լամպեր:

Նախագծով նախատեսված է վթարային լուսավորության երկու տեսակ.

- աշխատանքային լուսավորության վթարային անջատման դեպքում շարունակական աշխատանքի համար.
- տարհանման լուսավորություն - միջանցքներում, հիմնական անցումներում և սանդուղքներում, որոնք օգտագործվում են մարդկանց տարհանման համար:

Տարածքի լուսավորությունը կառավարվում է տեղային անջատիչներով: Համաձայն նորմերի, նախագիծը նախատեսում է վթարային լուսավորության ավտոմատ միացում, երբ անջատվում է էլեկտրամատակարարումը աշխատանքային լուսավորությանը, ինչպես նաև հրդեհային ազդանշանային համակարգի ազդանշանի հիման վրա:

Հրդեհային պաշտպանության սարքավորումները (FPF), վթարային լուսավորությունը, շենքի անվտանգության համակարգերը և տեսահսկման համակարգերը պատկանում են էլեկտրամատակարարման հուսալիության 1-ին կարգին, իսկ մնացած էլ. սարքավորումները՝ էլեկտրամատակարարման հուսալիության II կարգին:

Էլեկտրամատակարարման համակարգի տարրերը կառավարվում են բաշխիչ սարքի վահանակներում, ինչպես նաև բաշխիչ վահանակներում տեղադրված անջատիչ սարքերի միջոցով: Նախագծային լուծումները նախատեսում են նաև հրդեհի դեպքում օդափոխության ավտոմատ անջատում:

4.2. Շինարարության կազմակերպում

4.2.1. Շինարարության կազմակերպման համառոտ նկարագիր

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վաճակալել դրանք:

Մինչ շինարարական աշխատանքների սկսելը Կապալառուն պետք է ունենա անհրաժեշտ բոլոր համաձայնությունները, տրված ՏԻՄ-երի կողմից՝ կապված գոյություն ունեցող կոմունիկացիաների, էլեկտրագծերի և գազատարի հետ հատման, շինարարական աղբի տեղափոխման, գործող ավտոճանապարհների տարածքում շինաշխատանքների իրականացման վերաբերյալ և այլն:

Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մարմինների ներկայացուցիչների ներկայությամբ և թույլատվությամբ:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- ժամանակավոր ցանկապատի տեղադրում, շին. հրապարակի տարածքում տեղեկատվական վահանակների տեղադրում,
- շինարարական նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին (շին. հրապարակի ժամանակավոր էլեկտրամատակարարում և ջրամատակարարում, գիշերային լուսավորվածության ապահովում),

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական կազմակերպություններից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Արարատ քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը կկազմակերպվի այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի շին. աշխատանքների անընդհատությունը:
- Հավաքովի ե/բ կոնստրուկցիաների էլեմենտների պատրաստման համար խորհուրդ է տրվում օգտագործել Արարատ քաղաքի և նրան հարակից տարածքների շինարարական արդյունաբերության հզորությունները:
- Առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կբերվեն

անմիջապես շինարարական հրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը:

- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
- Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում:

Շինարարական հրապարակը (շին. հրապարակի կազմակերպման սխեման բերված է [հավելված 5](#)-ում) ներառյալ շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն կազմակերպվելու է բացառապես նախատեսվող գործունեության տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհով, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Շինարարական աղբը շինհրապարակից պարբերաբար կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ ծածկով ապահովված բեռնատարներով:

Կենցաղային աղբի կուտակման համար շին. հրապարակը ապահովված կլինի համապատասխան աղբամաններով: Չտեսակավորված կենցաղային աղբը (ծածկագիր՝ 9120040001004), որի ընդհանուր քանակը շինարարության փուլում կանխատեսվում է առավելագույնը 2.6 տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում կպահպանվեն ՀՀ կառավարության 2002թ. ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի պահանջները, համաձայն որի հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

4.2.2. Շինարարական անձնակազմ և հիմնական մեքենա-մեխանիզմներ

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը:

Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և գնահատվել է 18.5 ամիս:

Շինարարական աշխատանքների իրականացման համար ներգրավված բանվորական ուժը հիմնականում պետք է լինի բարձր որակավորում ունեցող

մասնագետների բրիգադ: Ոչ մասնագիտական բանվորական ուժի կիրառումը պետք է հասցվի նվազագույնի: Շինարարության ընդհանուր ղեկավարությունը իրագործվելու է տեղամասի պետի և աշխույժի կողմից:

Շինարարության ընթացքում պահանջվող աշխատողների առավելագույն թիվը շինարարության գնահատվում է առավելագույնը 30 մարդ, որից.

- ինժիներատեխնիկական անձնակազմ՝ 3 մարդ:
- բանվորներ՝ 27 մարդ (ներառյալ՝ օժանդակ տնտեսությունները):

Շինարարության ընթացքում անհրաժեշտ հիմնական մեքենաների և մեխանիզմների ցանկը ներկայացված է աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Տեխնիկական միջոցների անվանացանկ*

N	Մեքենա-մեխանիզմների անվանում	Մակնիշ/հզորություն	Քանակ, հատ
1	Մեկ շերտիով էքսկավատորներ, տարողունակությամբ: շերտի մինչև 0,35 մ3	EO-2621 «Ա» կամ այլք	1
2	Նույնը՝ 0,35 մ-ից ավելի շերտիի տարողությամբ3	EO-4111B կամ այլք	1
3	Բուլդոզերներ	DZ-42, D-271A կամ այլք	1
4	Շարժիչային գրեյդերներ	DZ-99A կամ այլք	1
5	Կաշող մեքենաներ և խափանումներ	DU-12A կամ այլք	1
6	Ինքնագնաց կռունկ	KobeIcoKK500	1
7	Ավտոմեքենայի կռունկ	KS-3577 կամ այլք	1
8	Շինարարական վերելակներ	S-447M կամ այլք	2
9	Մեկ շերտիով բեռնիչներ	TO-6 կամ այլք	1
10	Շարժական կոմպրեսորներ	TKS-3, ZIF-55 կամ այլք	1
11	Բետոնի պոմպեր	SB-126 կամ այլք	2
12	Ասֆալտապատեր	D-150 կամ այլք	1
13	Շարժական էլեկտրական եռակցում	ASB-300-5, AD-301 կամ	1 հավաքածու
14	Դյուրակիր ացետիլեն	D-150 կամ այլք	1 հավաքածու
15	Arc սարքավորումներ	T-300, TSO-1 կամ այլք	1 հավաքածու
16	Ոճավոր վիբրատորներ	S-992, Iv-17	2
17	Բետոնի խառնիչ գործարան	SB-134	2
18	Հավանգ պոմպեր	SO-50, S-896 կամ այլք	2
19	Վիբրացիայի սեղմման միավոր	VVOG-20/11	2
20	Հեռաղիտակային հողակապ	GV-26D, SHSSV-18	1
21	Կույտերի սեղմման տեղադրում	SVO-V-1 կամ SVO-V-2	1
22	Ինքնալրացուցիչ պոմպեր	GNOM 25-20 կամ այլք	2
23	Վիբրատոր	ՀՆԱ-2ա կամ ՄՇ-2	1
24	Նկարչական շարժական կայան	ՅՆԻԼ-3	2
25	Սվաղման շարժական կայան	PShS-2	2
26	Շարժական դիզելային էլեկտրակայան	DES-30 կամ այլք	1
27	Ինքնաթափ մեքենաներ,բարձրացնող հզորություն 5-12 տ	ՋԻԼ-MMZ-555, MAZ-503A, ԿրԱՉ-256BU կամ այլք	3

28	Բետոնի խառնիչ բեռնատարներ	SB-69, SB-113 կամ այլք	2
29	3-12 տոննա բեռնատարողությամբ տափակ տրանսպորտային միջոցներ	GAZ-51A, ZIL-130 MAZ-200 կամ այլք	3
30	5-8 տոննա բեռնատարողությամբ հարթ կցանքներ	MAZ-8926, GKB-817 կամ այլք	2

* մեքենաների և մեխանիզմների կազմը տրված յուրաքանչյուր բյուջեի համար խորհրդատվական կարգով և կարող են փոխարինվել նույն տեխնիկական պարամետրեր ունեցող այլ մեքենաներով ու մեխանիզմներով

4.2.3. Հողային աշխատանքներ, օգտագործվող բնատեսուրսներ

Հողային աշխատանքներ: Նախագծի հողային աշխատանքների հաշվարկն իրականացվել է համաձայն ներկայացված երկրաբանական կտրվածքի, ըստ որի ընդհանուր հողային հանույթը՝ կազմում է մոտ 7942 մ³ է, որից ետլիցքը՝ շուրջ 3998 մ³:

Շինարարական աղբի ընդհանուր քանակը կազմում է մոտ 3944 մ³ (տես՝ Առաջացած թափոններ), որը կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Համապատասխան տեղեկանքը Արարատի համայնքապետարան կողմից կտրվի շինարարության կապալառուին՝ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում: Լիցքային աշխատանքների ժամանակ լիցքի մեկ շերտում անթույլատրելի է տարատեսակ գրունտների օգտագործումը: Լիցքային գրուտի յուրաքանչյուր շերտ պետք է լցնել հողային պաստառի ողջ լայնությամբ՝ եզրից դեպի կենտրոն:

Համաձայն ՇՄՆ [«Հիդրոտեխնոլոգիայի և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների](#), հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Նախատեսվող գործունեության արդյունքում հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է սահմանափակ տարածքում, որտեղ կիրառվելու են բացասական ազդեցությունները մեղմացնող բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

Առաջացած թափոններ: Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները (համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետությունում գոյացող արտադրության (այդ թվում ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն հրամանի) իրենցից ներկայացնում են շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող հետևյալ թափոնատեսակները.

- շինարարական աշխատանքներում ներգրավված անձնակազմի կողմից առաջացրած չտեսակավորված կենցաղային աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ ծածկագիր 9120040001004, որի ընդհանուր քանակը

շինարարության յուրաքանչյուր փուլի ընթացքում կանխատեսվում է առավելագույնը 2.6 տ: Այն կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

- շինարարական աղբը՝ ծածակագիր 9120060101004, 3944մ³ ծավալով, որն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր,

Շինարարական աղբի փաստացի քանակի որոշումը և ծավալաթերթով նախատեսված վճարումը հնարավոր է իրականացնել տեղամասի տեխնիկական հսկողություն իրականացնող ինժեների և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության համաձայնությամբ:

Բոլոր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արարատի համայնքապետարանի հետ համաձայնեցված ձևաչափով, որի վերաբերյալ համապատասխան համաձայնությունները ձեռք կբերվեն մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը:

Շինարարական տեխնիկայի վառելիքով լիցքավորումը և յուղումը նախատեսվում է իրականացնել շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում, իսկ դրանց տեխնիկական սպասարկումը՝ համապատասխան մասնագիտացված ավտոտեխսպասարկման կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութեր չեն պահեստավորվելու: Հետևաբար նախատեսվող գործունեության արդյունքում յուղերի, քայուղերի, նավթամթերքների և դրանց մնացորդների տեսքով վտանգավոր թափոնների առաջացում չի կանխատեսվում:

Բնառեսուրսների օգտագործում: Շինարարական աշխատանքների ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ հետևյալ նպատակներով.

- հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանման/փոշենստեցման, հողի/գրունտի խոնավացման համար,
- անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների նպատակով:

Հաշվի առնելով շինարարության ընթացքում միաժամանակյա շինարարական աշխատանքների իրականացման հաշվարկային մակերեսը, ջրցանի հաշվարկը կատարվել է շինարարության առավելագույն տարածքի չափի համար: Մանավորապես.

$$U_1 = S_1 \times K_1 \times T_1, \text{ որտեղ}$$

S - ջրվող տարածքի մակերես, 4816.1 մ²,

K - 1 մ² օրական ջրցանի նորմ, 0.0015 մ³ (կամ 1.5լ/մ²):

T - շինարարության ընթացքում աշխատանքային օրերի թիվը, 407 օր:

Հետևապես ջրցանի ջրապահանջը կկազմի.

$$U_1 = 4816.1 \times 0.0015 \times 407 = 2940.22 \text{ մ}^3$$

Աշխատակիցների և բանվորների խմելու և կենցաղային պահանջների համար ջրապահանջը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N \times + n_1 \times N_1) T_1, \text{ որտեղ}$$

n - ԻՏ աշխատողների թվաքանակ, 31 մարդ

N - ԻՏԱ ջրածախսի նորմատիվ, 0.016 մ³օր/մարդ

T₁ - շինարարության ողջ ժամանակահատվածի աշխատանքային օրերի թիվ, 407 օր

n₁- բանվորների (այդ թվում՝ վարորդներ) թվաքանակ, 27 մարդ

N₁ - բանվորների ջրածախսի նորմատիվ, 0.025 մ³օր/մարդ

$$W_{\text{խ.տ.}} = (3 \times 0.016 + 27 \times 0.025) \times 407 = 294.26 \text{ մ}^3$$

Շինարարության ընթացքում պահանջվող առավելագույն ջրապահանջը կկազմի՝

$$2940.22 \text{ մ}^3 + 294.26 \text{ մ}^3 = 3234.48 \text{ մ}^3$$

Շինարարական աշխատանքների ընթացքում շին. հրապարակում առաջարկվում է նախատեսել կոնտեյների տիպի հատուկ շինություններ.

- պահակակետ,
- գրասենյակ,
- հանդերձարան-ցնցուղարան,
- լվացարան,
- ճաշարան,
- բուժկետ,
- բիոզուգարան և այլն:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում և ըստ անհրաժեշտության այլ լրացուցիչ պայմանների ապահովումը կարող է իրականացվել հետագայում:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջրապահանջն ապահովվելու է տարածքում առկա քաղաքային ջրագծից:

Շին. աշխատանքները նախատեսված է իրականացնել 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 09:00-18:00:

5. ԵԼԱԿԵՏԱՑԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Բնապահպանական պայմանների բնութագիրը

Արարատ քաղաքը գտնվում է Արարատի մարզում, մայրաքաղաք Երևանից 47 կմ հարավ-արևելք, և Արաքս գետից 7 կմ արևելք՝ Հայաստան-Թուրքիա սահմանին: Այն հիմնադրվել է 1930թ. և տեղակայված է Երևան-Նախիջևան ճանապարհի վրա, մարզկենտրոնից հեռավորությունը կազմում է մոտ 19 կմ: Նախատեսվող գործունեության տարածքը տեղակայված է Արարատ քաղաքի կենտրոնական մասում՝ Շահումյան 46 հասցեում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Միջինարաքսյան գոգավորությունում, ծովի մակարդակից 818-825 մ բարձրության վրա:

Վլիմա: Ուսումնասիրվող տարածքը, համաձայն «Շինարարական կլիմայաբանության» ՀՀՇՆ 22-01-2024)-ի, գտնվում է «տաք կլիմայական շրջանում: Ամառը շոգ է ու չոր, բարենպաստ լեռնահովտային քամիներով, ձմեռը ցուրտ է, անհողմ ու կարճատև: Ձմռան տևողությունը գնահատվում է 133 օր (սկիզբը նոյեմբերի 16, ավարտը՝ փետրվարի 13): Օդի տարեկան միջին ջերմաստիճանը +12.6°C: «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 22-01-2024 շինարարական նորմերի համաձայն՝ ստորև ներկայացված են Արարատի տարածաշրջանում օդի կլիմայական մի շարք այլ տվյալներ՝ համաձայն «Արարատ» օդերևութաբանական կայանի դիտակայանի տվյալների:

Աղյուսակ 3. Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայր	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Արարատ	-3.1	0.2	6.9	13.4	18.1	22.6	26.4	26.0	21.1	13.8	6.2	0.0	12.6	-31.6	42.6

Աղյուսակ 4. Օդի միջին առավելագույն (մ.ա.) և միջին նվազագույն (մ.ն.) ջերմաստիճանը, °C

Բնակավայր	մ.ա./մ.ն.	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Արարատ	մ.ա.	2.1	6.0	13.5	20.1	25.1	30.2	33.7	33.5	29.0	21.8	13.3	5.1	19.5
	մ.ն.	-7.0	-4.5	1.2	7.2	11.7	15.9	19.5	18.8	13.7	7.2	0.9	-3.9	6.7

Աղյուսակ 5. Օդի դիտված բացարձակ առավելագույն (ա) և նվազագույն (ն) ջերմաստիճանը

Բնակավայր	ա/ն	ըստ ամիսների, °C												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Արարատ	ա	18.9	21.0	27.8	34.5	35.3	39.5	42.6	42.2	39.3	32.2	26.4	21.9	42.6
	ն	-29.7	-29.2	-23.0	-6.2	1.5	5.5	8.7	7.3	1.6	-4.7	-12.5	-31.6	-31.6

Աղյուսակ 6. Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը ցուրտ ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (նվազագույն ջերմաչափով)									
	≤-15		≤-20		≤-25		≤-30		≤-35	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Արարատ										
Դեկտեմբեր	0.8	12	0.2	7	0.1	5	0.03	2		
Հունվար	3.5	25	1.4	18	0.1	3				
Փետրվար	1.5	16	0.7	10	0.03	2				

Աղյուսակ 7. Օդի նշված ջերմաստիճաններով օրերի միջին (մ) և առավելագույն (ա) քանակը տաք ժամանակահատվածի համար

Ամիս	Օդի ջերմաստիճանը, °C (առավելագույն ջերմաչափի տվյալներով)							
	≥25		≥30		≥35		≥40	
	մ	ա	մ	ա	մ	ա	մ	ա
	1	2	3	4	5	6	7	8
Արարատ								
Հունիս	27.7	30	16.8	30	2.7	11		
Հուլիս	30.8	31	28.0	31	11.4	26	0.4	5
Օգոստոս	30.8	31	27.7	31	10.1	28	0.4	6

Աղյուսակ 8. Օդի էքստրեմալ ջերմաստիճանների միջին արժեքները (°C) (առավելագույնի միջինը՝ ա. մ., և նվազագույնի միջինը՝ ն.մ.)

Բնակավայր	ա.մ./ ն.մ.	ըստ ամիսների												Տարեկան
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Արարատ	ա.մ.	9.2	13.4	21.1	26.9	31.3	35.4	38.5	38.1	34.8	28.1	20.0	12.7	39.2
	ն.մ.	-14.9	-12.1	-5.7	0.4	6.2	10.8	14.4	13.8	7.1	0.5	-5.9	-10.9	-17.0

Աղյուսակ 9. Օդի հարաբերական խոնավություն

Բնակավայր	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվ.	Փետր.	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստ.	Սեպ.	Հոկ.	Նոյեմ.	Դեկտ.		Միջին ամսական	Միջին ամսական, ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ամսական, ժամը 15-ին
	78	71	60	57	55	49	45	46	50	62	72	78	60	78	63	45	32
Արարատ	78	71	60	57	55	49	45	46	50	62	72	78	60	78	63	45	32

Աղյուսակ 10. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայր	Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
	17	18	24	36	36	21	10	7	8	18	21	17	233		
Արարատ	26	34	26	31	34	37	20	31	28	32	35	28	37	97	136

Աղյուսակ 11. Չյան ծածկույթ

Բնակավայր	Չյան ծածկույթ			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Արարատ	35	28	61	37

Աղյուսակ 12. Քամիներ

Բնակավայր	Ամիսներ	Միջին արագությունը, մ/վ								Մնորորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Վրկնելիությունը, %													
		Միջին արագությունը, մ/վ				ըստ ուղղությունների									
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
Արարատ	հունվար	16	3	8	18	10	5	11	29	50	1.3	Հս	2.6	Հվ-Արլ	2.7
		1.9	1.6	1.7	2.7	2.1	1.5	1.9	2.2						
	ապրիլ	13	4	8	29	15	5	8	18	28	2.3				
		2.7	2.3	2.7	3.4	2.8	2.7	2.4	2.8						
	հուլիս	18	3	6	14	12	5	10	32	23	2.3				
		2.6	2.7	2.2	2.7	2.2	2.1	2.6	3.0						
	հոկտեմբեր	17	3	8	18	13	4	11	26	39	1.5				
		2.3	1.8	1.7	2.3	2.0	1.9	2.1	2.5						

Աղյուսակ 13. Քամու հաշվարկային արագություն

Բնակավայրի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (>15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
				25	50	100
Արարատ	921.5	1.7	14	25	26	28

Հիդրոերկրաբանական պայմանները: Տարածաշրջանի ստորերկրյա ջրերը տեղադրված են էֆուզիվ (լավաներ, տուֆեր) և լճա-գետային գոյացումների համալիրներին: Որպես հիմնական ջրահետ շերտ ծառայում են երրորդական և ավելի հին անջրանցիկ ապարներ, որոնք թաղված են չորրորդական նստվածքների և լավաների տակ:

Հետազննվող տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Ուսումնասիրվող տարածքում լայն տարածում է գտել չորրորդական նստվածքների ջրատար շերտը: Տեղանքի հիդրոերկրաբանական պայմանները բնութագրվում են մակերևույթից առաջին ջրատար շերտի զարգացմամբ՝ սահմանափակված խճաքարային հողերով: Ստորերկրյա ջրերը հայտնաբերվել են 2.0 - 3.5 մ խորության վրա (բացարձակ բարձրությունները 7.37 - 8.93 մ):

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:

Երկրաբանական պայմաններ: Երկրաբանական տեսակետից շրջանը կազմված է վերին պլիոցեն-պլեյստոցենի հասակի լճային, գետային, հեղեղային նստվածքներով: Նստվածքների ստվարաշերտն իր հերթին ծածկված է չորրորդական հասակի այլուվիալ-պրոյուվիալ նստվածքներով: Այս նստվածքները զարգացած են գոգահովիտներում, Արաքս գետի հովտում և ներկայացված են մագմայական և նստվածքային ապարների կոպտագլանված բեկորներով, ինչպես նաև կավերով, կավավազով, ավազներով:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են լճագետային և հրաբխածին գոյացումների համալիրներ, որոնք ներկայացված են պալեոզոյի և մեզո-կայնոզոյի ավազակավային և կարբոնատային ապարներով: Արարատյան գոգավորությունը նեոգեն, չորրորդականի գոգածալքային-գրաբենային բարդ կառուցվածք է՝ տրոհված բազմաթիվ երիտասարդ խզումներով:

Ուսումնասիրված տարածքում տեսողական նկարագրության, լաբորատոր վերլուծությունների և ֆիզիկական և մեխանիկական հատկությունների ցուցիչների մասնակի արժեքների վիճակագրական մշակման հիման վրա հայտնաբերվել են հողի ինժեներա-երկրաբանական հետևյալ շերտերը (վերնից-ներքև)։


- **Շերտ-1.** Տեխնածին. ծանր, փափուկ առածգական կավ: Ֆիզիկական բնութագրերի ստանդարտ արժեքներն են՝ բնական խոնավությունը՝ 40,7%, հողի խտությունը՝ 1,59 գ/սմ³, ծակոտկենության գործակիցը՝ 1,36: Ամրության և դեֆորմացիոն բնութագրերի ստանդարտ արժեքներն են՝ տեսակարար կառչելիությունը՝ 30 կՊա, ներքին շփման անկյունը՝ 15°, դեֆորմացիայի մոդուլը՝ 5,0 ՄՊա:
- **Շերտ-2.** Ծանր հոսունությամբ կավ: Ֆիզիկական բնութագրերի ստանդարտ արժեքներն են՝ բնական խոնավությունը՝ 38,3%, հողի խտությունը՝ 1.72 գ/սմ³, ծակոտկենության գործակիցը՝ 1.15, կառչելիությունը՝ 17.2 կՊա, ներքին շփման անկյուն՝ 8.8°, դեֆորմացիայի մոդուլ՝ 2.9 ՄՊա:
- **Շերտ-3.** Խիճային շերտ՝ թեթև կարծր կավային լցանյութով: Ֆիզիկական բնութագրերի ստանդարտ արժեքներն են՝ բնական խոնավությունը՝ 17.2%, հողի խտությունը՝ 1.82 գ/սմ³, ծակոտկենության գործակիցը՝ 0.73:

Ուսումնասիրվող տեղամասում հիմնատակերի իրականացման համար հաշվի են առնված հիմքերի կոնստրուկտորական հաշվարկները (Ժայռային գրունտ՝ առնվազն F300, M800, p=1.9 տ/մ³):

5.2 Տարածքի սեյսմիկ բնութագիրը

Հետազոտվող շրջանը մտնում է Արաքսյան օռոտեկտոնական գոտու Մերձարաքսյան ինտրագետանտիկլինալ զոնայի մեջ, որն ընդգրկում է Արարատի դաշտավայրը և Ուրծի լեռնաշղթան: Տարածաշրջանում առկա են խոշոր խորքային խզվածքներ: Համաձայն ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման

նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի (տես՝ նկ. 2), նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 1-ին գոտում, որտեղ արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max}=0.3g$ և ունի 8-9 բալ սեյսմիկայնություն:



Նկար 2. Հայաստանի Հանրապետության տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզ

5.3 Բուսական և կենդանական աշխարհ

Բուսական աշխարհ: Ուսումնասիրվող տարածաշրջանը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Հին Միջերկրածովյան ֆլորիստիկ ենթաթագավորության Իրանա-Թուրանական գավառի Արմենա-Իրանական ենթագավառի Երևանի ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978):

Բուսականությունը հիմնականում կիսաանապատային և անապատային է: Այստեղ հիմնականում աճում են չորասեր, աղասեր բուսատեսակներ, որոնց հիմնական կենսաձևերը միամյա, այնուհետև բազմամյա խոտաբույսերն են: Գերակշռում են անապատային հողերը: Ավելի տարածված են հալոֆիլ և գիպսոֆիլ անապատները:

Նախալեռնային կիսաանապատային գոտու գորշահողերի վրա աճում են ֆրիգանոիդային չորասեր բույսեր, էֆեմերներ, հոտավետ օշինդրը և այլն: Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝ սոլերոս (*Salicornia europaea*), կալիդիում (*Kalidium caspicum*), աղահասկ (*Halostachys caspica*), բորակաբույս (*Nitraria schoberi*); Հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակ՝ արարատյան որդան կարմիրի (*Porphyrophora hammelii*) գոյությունը, որը զարգանում է հիմնականում որդանախոտի

(*Aeluropus litoralis*) արմատների վրա: Գիպսոֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող լեռնաշղթային: Գիպսոֆիլ անապատներին բնորոշ բույսեր են սապնարմատ (*Gypsophila*) ցեղի ներկայացուցիչները, հալանտիումը (*Halanthium rarifolium*), մոլոկան Թախթաջյանի (*Lactuca takhtadzhianii*), զուգասերն (*Zygophyllum atriplicoides*) և այլն:

Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ գեղածնկիկ մատիտեղանման (*Calligonum polygonoides*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), եղջերախոտ, եղնաբղեղ ավազուտային (*Ceratocarpus arenarius*), գեյդիցիա ծաղկավոր (*Seidlitzia florida*): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ, երիցուկ, իշակաթնուկ: **Տարածաշրջանում հանդիպող բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակներից այստեղ կարող են հանդիպել Իշամառլ արարատյան (*Sonchus araraticus*), Աղահասկիկ Բելանժեի (*Halostachys belangeriana*):**

Ուսումնասիրվող տարածքում անտառներ չկան, բնափայտավոր բուսատեսակները արտահայտված են կարմրանի և այլ հատուկենտ թփերով ու կիսաթփերով:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կիսանապատային ցամաքային էկոհամակարգի կենդանական աշխարհը բազմազան է՝ ներկայացված գերազանցապես անապատային և կիսանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Հայաստանի կիսանապատային ցամաքային էկոհամակարգերում գրանցված է ողնաշարավոր կենդանիների 101 տեսակ (երկկենցաղների՝ 4, սողունների՝ 30, թռչունների՝ 23, կաթնասունների 44) և անողնաշար կենդանիների 1687 (այդ թվում՝ փափկամարմինների 59, սարդակերպերի 97, միջատների 1531):

Արարատի տարածաշրջանում հանդիպում են անողնաշարավոր կենդանիներից 51, իսկ ողնաշարավորներից 92 տեսակ: Կիսանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները: Աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphiophora hamelii*) գոյությունը: Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են գորշուկը, նապաստակը, ճահճակուղբը, ժայռային մողեսը, լորտու սովորականը, դաշտամուկը, քարակզաքիսը և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևավորդը, մրջյունը, ծղրիդը, ճռիկը, մորեխը և այլն:

Կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից այստեղ կարող են հանդիպել Խայտաբաղ (*Todorna todorna*), Մարգագետնային ծիծեռակտցար (*Glareola patincola*), անդրկովկասյան մողեսիկ (լատ.՝ *Eremias pleskei*) տեսակները:

Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր օձուկը, ռնգեղջյուր օձը:

Բազմազան են թռչունները և միջատները: Թռչուններից հանդիպում են տնային ճնճուկը (*Passer domesticus*), մոխրագույն ագռավը (*Corvus corone*), անտառային արտույտը (*Lullula arborea*), գյուղական ծիծեռնակը (*Hirundo rustica*), եղինջաթոչնակը

(Troglodytes troglodytes), ժայռային ծիծեռնակը (Ptyonoprogne rupestris): Սողուններից հանդիպում են գյուրգա, հայկական իծ, լորտուներ, Արևմտյան վիշապիկը (Eryx jaculus) և այլն: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Ծրագրի իրականացման բուն տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, առանձնահատուկ պահպանության կարիք ունեցող, վտանգված, խոցելի, անհետացման եզրին գտնվող կամ ԲՊՄՄ (Բնության Պահպանության Միջազգային Միություն) կարմիր ցուցակում գրանցված տեսակներ: Տարածքը զուրկ է բուսականությունից՝ բացառությամբ տեղ-տեղ ինքնաբերաբար աճող ոչ արժեքավոր բուսականությունից: Բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանացված լինելու պատճառով: Տարածքը գտնվում է Արարատ համայնքի կենտրոնական և ամենաբանուկ հատվածում, տեղակայված լինելով քաղաքային ակտիվ զարգացած միջավայրում, ինչը փաստում է, որ նախատեսվող գործունեության տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը:

Բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի Շահումյան 46 հասցեում, որի ընդայնումը և սեփականության նոր վկայականի ձեռք բերումը ներկայումս ընթացքի մեջ է: Գործունեության տարածքի հետ կապված բոլոր չափագրումներն ավարտված են, առկա են տարածքի շրջադարձային կետերի կոորդինատները WGS-84 ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով (տես՝ հավելված 1), ինչը նաև հիմք է նոր վկայականի տրամադրման համար: Տեղանքը գտնվում է քաղաքային զարգացած միջավայրում, ինչը փաստում է, որ նախատեսվող գործունեության տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը:

5.4 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արարատ քաղաքի Շահումյան 46 հասցեում, որի տարածքը ներկայումս ընդլայնման փուլում է, ինչի վերաբերյալ Արարատի համայնքապետարանը ստացել է նաև ՀՀ կառավարության համաձայնությունը: Նոր վկայականի ձեռք բերումն ընթացքի մեջ է և տարածքի չափագրման աշխատանքներն արդեն ավարտված են:

«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թ. օգոստոսի 14-ի [N 967-Ն](#) որոշման համաձայն գործունեության տարածքում և դրան հարակից տարածքներում բացակայում են երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանները:

Չնայած Արարատ քաղաքի գտնվելու շրջակայքում առկա են բնության 2 հուշարձաններ, գործունեության տարածքը, ինչպես նաև նրան հարակից տարածքները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքներում:

1. Արարատ քաղաքում է տեղակայված «Աղակալած ճահճուտ» կենսաբանական հուշարձանը, որը գտնվում է հանքային աղբյուրների մոտ և որևէ առնչություն չունի նախատեսվող գործունեության տարածքի հետ՝ գտնվելով հայցվող տարածքից առնվազն 4 կմ հեռավորության վրա:

2. Արարատյան գոգավորության թեք հարթություններում, Գոռավան գյուղի վարչական տարածքի հարավ-արևելյան մասում է տեղակայված «Գոռավանի ավազուտներ»-ը, որը նաև բնության հատուկ պահպանվող տարածք է: «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի կանոնադրությունը և տարածքի չափը հաստատվել են ՀՀ կառավարության 2007 թ. հունվարի 25-ի N 975-Ն որոշմամբ, որի համաձայն «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, առանց արգելավայրի կարգավիճակի փոփոխության, հանձնվել է ՀՀ ՇՄՆ «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ ենթակայությանը: ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի N324-Ն որոշմամբ հաստատվել է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի սահմանները և հատակագծը: Ներկայումս այն զբաղեցնում է 95,99 հա տարածք: Արգելավայրը ձևավորվել է ռելիեֆային այլույլալ նստվածքների մի քանի տեղամասերի վրա: Արգելավայրի տարածքում աճում են 162 տեսակի անոթավոր բույսեր, որոնցից 11 տեսակներ գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում: Ողնաշարավոր կենդանիների տեսակների թիվը հասնում է մոտ 33-ի, որոնցից 9-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում, անողնաշար կենդանիների ֆաունան՝ մոտ 700 տեսակ, որից 12-ը՝ բզեզների ՀՀ էնդեմիկ: Այս տարածքը ևս որևէ առնչություն չունի նախատեսվող գործունեության տարածքի հետ՝ գտնվելով հայցվող տարածքից առնվազն 7 կմ հեռավորության վրա:

Նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են նաև պատմամշակութային արժեք ներկայացնող կառույցները կամ հուշարձանները, ինչը երևում է նաև «Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» ՀՀ կառավարության [385-Ն որոշումից](#) (15 մարտ, 2007 թ.), որում Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված հուշարձանները որևէ առնչություն չունեն նախատեսվող գործունեության տարածքի հետ:

5.5 Տարածքի բարեկարգում և կանաչապատում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքները նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Բարեկարգման աշխատանքները ներառում են ռելիեֆի կազմակերպում հեղեղատարի տեղադրմամբ, ավտոճանապարհների և մայրերի կառուցում ու բարեկարգում, տեղանքի հարավային մասում բաց մարզահրապարակների (բասկետբոլի խաղահրապարակ, բադմինտոնի/թենիսի մարզադաշտ) ստեղծում՝ իրենց սպասակող օժանդակ տարածքներով, բացօդյա կայանատեղիների կազմակերպում՝ նոր

մարզադահլիճից դեպի արևելք, բացօդյա տարածքում տրինաժոններ, որոնցից կարող են օգտվել նաև հարակից տարածքի բնակիչները:

Տարածքի կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ: **Ստորև ներկայացված է կանաչապատման համար կիրառվող բուսատեսակների տեսակային կազմը, որի հետագա խնամքը կազմակերպվելու և ապահովվելու է Արարատի համայնքապետարանի կողմից՝ ջրցան մեքենաների միջոցով:**

ԱՆԱՋԱՐԿՎՈՂ ԹՓԱՏԵՍԱԿՆԵՐՆ ՓՐԵՃԼԱԳԱԵՄՅԵ ՎԻԴՅ ԿՍՏՕՅ

	Անվանում Наименование	Միջճառային հեռ. /մետր/ Միջճառային հեռ. /մետր/	Պայմանական նշան Բանակ Սլոնայնոե обозначение Кол-во	
1	Տոսախ մշտադալար (սամշիտ) Самшит вечнозелёный	0.5	30մետր	
2	Եղրևանի սովորական Сирень обыкновенная	1.5	25	
3	Կիպրոս սովորական Бирючина обыкновенная	0.5	40 մետր	
4	Արմավաշուշան թելատու Юкка нитчатая	1	25	
5	Սիզամարգ Газон		2366մ ²	

ԱՆԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ ՓՐԵՃԼԱԳԱԵՄՅԵ ՎԻԴՅ ԴԵՐԵՎԵՅԵՅ

	Անվանում наименование	Միջճառային հեռ. /մետր/	Պայմանական նշան սլոնայնոե	Բանակ կոլ-во
1	Սոսի արևելյան Восточный Платан	8		8
2	Թխկի սրատերև Клён остролистный	6		10
3	Ալբիցիա լենկորանյան Альбиция ленкоранская	7		10
4	Եղևնի արծաթափայլ Ель серебристая	6		4
5	Ռոբինիա կեղծակացիա գնդաձև. Робиния псевдоакация	4		8
6	Լացոդ ուռենի Ива Белая	6		8
7	Թույա սյունաձև Туя	2		8
8	Եղևնի սովորական Ель обыкновенная	5		8
9	Սոճի դրիմյան Сосна крымская	4		8

Բակային հատվածն ապահովված է լինելու կանաչապատ միջավայրով՝ տարբեր դեկորատիվ ծառերի և թփերի համադրմամբ: Ամբողջ տարածքը նախատեսվում է ցանկապատել, ինչպես նաև լուսավորել արտաքին լամպերով, որոնք ապահովվելու են արհեստական լուսավորության ստանդարտ մակարդակ:

Ինժեներատեխնիկական ուսումնասիրությունների արդյունքների համաձայն գործունեության տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումն ու օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության

պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցնելով **Արարատի** համայնքապետարանի հետ:

Կանաչապատումը կիրականացվի համաձայն կանաչապատման հատակագծի և սխեմայի, որը համաձայնեցվել է Արարատի համայնքապետարանի հետ:

Կանաչապատման համար նախատեսված է 622 մ² մակերեսով սիզամարգի ստեղծում, դեկորատիվ թփուտների և ծառերի տնկում: Բարեկարգման և կանաչապատման սխեման բերված է [հավելված 6](#)-ում:




Կանաչապատման համար կիրառվելու են այնպիսի բուսատեսակներ, որոնք իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված կլինեն նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և լիարժեքորեն կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառույթները՝ միաժամանակ համապատասխանելով ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման 6-րդ և 7-րդ գլխի պահանջներին:

5.6 Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումներն իրականացվում են հիբրիդային դիտացանցի միջոցով: Այն բաղկացած է 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման և ավտոմատ դիտարկումների դիտակայանից, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետից, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ որոշվող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006 թ. օգոստոսի 2-ի N160-Ն որոշման համաձայն:

Ուսումնասիրվող տարածքում [«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ](#): Քաղաքում գործում է 1 անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:



Նախատեսվող գործունեության արդյունքում օդային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/կանխմանը:

5.7 Ջրային ռեսուրսներ

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն որոշմամբ Հայաստանում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների կառավարումը կատարվում է ջրավազանային կառավարման 6 տարածքների միջոցով: Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է 6 ջրավազանային կառավարման տարածքի ջրային ռեսուրսների 151 դիտակետ:

Գործունեության տարածքը պատկանում է Արարատյան ջրավազանային կառավարման տարածքին: Արարատ խոշորացված համայնքի տարածքի ջրագրական ցանցը ներկայացված է Արաքս գետով՝ իր Վեդի վտակով: Համաձայն ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից [2022թ. համար հրապարակված մակերևութային ջրերի որակի վերաբերյալ տարեկան ամփոփագրի](#) տվյալների, Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից 0.5 կմ վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), իսկ Արարատ քաղաքից 6 կմ ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ իոնով, մանգանով և ալյումինով:

Հարկ է նշել, որ անմիջապես Արարատ քաղաքի գտնվելու շրջանում մակերևութային ջրահոսքերը բացակայում են և նախատեսվող գործունեության արդյունքում ջրային ավազանի աղտոտվածության ավելացում չի կանխատեսվում: Այնուամենայնիվ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազեցմանը/կանխմանը:

5.8 Հողեր

Համաձայն ՇՄՆ [«Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրապարակված տվյալների](#), հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թ. հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: 2023 թ. 1-ին եռամսյակում հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման դիտարկումներ կատարվել են Մեծամոր, Արմավիր, Կապան, Քաջարան, Մեղրի և Ագարակ քաղաքներում, իսկ 2023 թ. 3-րդ եռամսյակում՝ միայն Գեղարքունիքի մարզի Ջիլի հանքային դաշտում: Արարատի քաղաքի համար նման դիտարկումներ չեն կատարվել և աղտոտվածության վերաբերյալ տվյալներ առկա չեն:

Նախատեսվող գործունեության արդյունքում հողային ծածկույթի լրացուցիչ ատոտվածության ավելացում չի կանխատեսվում, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները՝ ուղղված հնարավոր ազդեցությունների նվազմանը/կանխմանը:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Սոցիալական գործոններ, ժողովրդագրական կազմ և բնակչություն

Արարատ քաղաքը խոշորացված համայնքի կենտրոն է, հիմնադրվել է 1930թ.: Քաղաքի կազմի մեջ է մտնում 4կմ հեռավորության վրա գտնվող Ոսկու կորզման ֆաբրիկայի (ՈԿՖ) բանավանը, Արարատյան Զանգվածը և քոթեջների թաղամասը: Քաղաքի բնակչության թիվը՝ 17984 հոգի է (տղամարդիք՝ 9782, կանայք՝ 8202), այդ թվում ՈԿՖ բանավանը՝ 4800 հոգի:

Քաղաքը զուրկ է մշակելի հողատարածքներից:

Բնակչությունը հիմնականում աշխատում է ցեմենտի գործարանում և Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում: Փոքրաթիվ են արտադրության մյուս բնագավառներում աշխատողները: Բնակիչների մի մասն էլ աշխատում է կրթության, առողջապահության, մշակույթի, սպասարկման և այլ բնագավառներում, զբաղվում է անհատ ձեռներեցությամբ: Քիչ չեն նաև արտագնա աշխատանքի մեկնողների և աշխատանք որոնողների թիվը:

17984 բնակիչներից աշխատունակ (18-62 տարեկան) բնակչության թվաքանակը կազմում է 10235 մարդ, կենսաթոշակառուներ՝ 3135 մարդ: Բնակչությունը զբաղված է հետևյալ ոլորտներում.

- արդյունաբերությունում՝ 2342 մարդ,
- էներգետիկայի, գազի, ջրամատակարարման ոլորտում՝ 56 մարդ
- շինարարությունում՝ 392 մարդ
- առևտրի, կենցաղսպասարկման ոլորտում՝ 392 մարդ
- տրանսպորտի և կապի ոլորտում՝ 32 մարդ
- տեղական ինքնակառավարման մարմնում՝ 52 մարդ
- կրթության, այդ թվում նախադպրոցական կրթության ոլորտում՝ 513 մարդ
- կոմունալ, սոցիալական և անհատական ծառայությունում՝ 70 մարդ
- ՀՈԱԿ-ներում՝ 132 մարդ
- պետական մարմիններում՝ 61 մարդ
- գործազուրկներ՝ 324 մարդ
- աշխատանք փնտրողներ՝ 310 մարդ:

Քաղաքի վարչական տարածքը կազմում է 1466.85 հա, որից՝

- արդյունաբերական արտադրական, շինարարության տակ գտնվող հողեր՝ 191,89 հա
- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ չկան
- չմշակվող համայնքային հողեր՝ 756.67հա
- բնակչության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողեր/ոռոգելի՝ 29.1հա
- վարելահողեր, պտղատու և խաղողի այգիներ, խոտ հարքեր չկան
- այլ գյուղատնտեսական հողեր՝ 80.11հա

Պայմանների բացակայության պատճառով ընտանի անասուններ շատ քիչ են պահվում: Զուրկ լինելով գյուղատնտեսական մշակելի հողատարածքներից, Արարատ

քաղաքը 1991թ. հողի սեփականաշնորհումից չի օգտվել: Արարատի բոլոր փողոցները ասֆալտապատված են ու լուսավորված: Արարատ քաղաքը ՈԿՖ բանավանի հետ մշտական կապված է երթուղային տրանսպորտով: Արարատ քաղաքում գործում են.

- 6 հանրակրթական դպրոցներ, որտեղ սովորող աշակերտներների ընդհանուր թիվը՝ 2394 հոգի է, ուսուցիչներինը՝ 154, դասարանների՝ 98,
- 4 մանկապարտեզներ, որտեղ հաճախում են 562 երեխա, որոնք ընդգրկված են 22 խմբերում, աշխատողների թիվը 129 հոգի է,
- մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն (150 հաճախորդ, 22 աշխատող), արվեստի դպրոցներ, այդ թվում Արվեստի միջնակարգ մասնագիտական դպրոց (310 սովորող, 30 մասնագետ),
- «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (354 ուսանող, 32 մասնագետ), բժշկական քոլեջ (230 ուսանող, 31 մասնագետ),
- «Արարատ քաղաքի մարզադպրոց» ՀՈԱԿ (253 մարզիկ, 12 մարզիչ), և ՈԿՖ բանավանի մարզադահլիճը (40 մարզիկ և 2 մարզիչ),
- «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն՝ սպասարկում է շուրջ 36 հազ. բնակչի, բուժանձնակազմը 251 հոգի է,
- ՈԿՖ բանավանի պոլիկլինիկական ունի 2 բժիշկ և 6 միջին բուժանձնակազմ, 40 այցելող/օր Շենքը վերանորոգման և գույքի կարիք ունի, չունի ջեռուցում,
- մշակույթի տուն՝ 2 դահլիճներով, 400 նստատեղով, 900 նստատեղով բաց ամֆիթատրոն, քաղաքային գրադարան՝ 26466 գրքային ֆոնդով և մանկական գրադարան՝ 14877 գրքային ֆոնդով, ընթերցողների ընդհանուր թիվը 2500-ից ավել է, գործող ուսումնական 8 հաստատությունների գրադարաններ:

Քաղաքում գործում են 193 առևտրի, սպասարկման և արտադրական ձեռնարկություններ (պարենային ապրանքների՝ 54, ոչ պարենային՝ 80, հասարակական սննդի՝ 4, այլ օբյեկտներ՝ 55), 12 վարսավիրանոց, 11 դեղատուն, հաց և հացամթերք արտադրող՝ 7, կահույքի և այլ իրեր արտադրող՝ 2 ձեռնարկություններ, գազի լիցքավորման 1 և բենզինի լիցքավորման 2 կետեր, տաքսի ծառայության 3 ընկերություն, ավտոտեխսպասարկման 1 կետ:

Արարատ քաղաքի և ամբողջ տարածաշրջանի բնակչությունը և հիմնարկ-ձեռնարկությունները սպասարկվում են 5 բանկերի մասնաճյուղերի կողմից:

Համայնքապետարանի տվյալներով, Արարատի քաղաքային համայնքի ուժեղ կողմ է հանդիսանում ազատ աշխատուժի բազմապրոֆիլ արհեստավարժ մասնագետների առկայությունը, իսկ պրոբլեմներից մեկը՝ աշխատատեղերի բացակայության պատճառով համայնքից արտագնա աշխատանքի մեկնողներ և անապահով ընտանիքների թվի ավելացումը: Այլ ռիսկեր և պրոբլեմներ՝ ինքնահոս ոռոգման ջրի բացակայությունը, ՈԿՖ բանավանի գրունտային ջրերի անբավարար հեռացման պատճառով բնակելի շենքերին սպառնացող վտանգը, կոյուղու ցանցի անբավարար աշխատանքը և այլն:

2022-2026 թվականների ընթացքում նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները.

- աջակցել գործող արտադրական ձեռնարկություններին՝ աստիճանաբար ընդլայնելու արտադրության ծավալները և ավելացնելու աշխատատեղերը,
- աջակցել նոր արտադրություններ և աշխատատեղեր ստեղծելու նախաձեռնությունն ցուցաբերող գործարարներին՝ նրանց տալով որոշակի արտոնություններ,
- խթանել առևտրի, ծառայությունների, փոքր և միջին նոր կենտրոնների բացումը,
- դիմել ՀՀ Կառավարությանը՝ ՀՀ-ում ներդրումային ծրագրերից մեկի իրականացումը նախատեսելու Արարատ քաղաքային համայնքում:

Տարբեր ծրագրերի իրականացման ու հիմնադրամներից լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման շնորհիվ վերջին տարիներին բարելավվել է Արարատ քաղաքի աղբավայրը, իրականացվել են կանաչապատման աշխատանքներ, ՈԿՖ բանավանդում կառուցվել է 2կմ երկարությամբ նոր դրենաժային համակարգ և այլն:

Սույն գործունեությամբ նախատեսվող մարզադահլիճն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով իրականացվող շինություն: Նման նախաձեռնությունը հնարավորություն կտա Արարատի մարզում ոչ միայն զարգացնել սպորտային տարբեր մարզաձևերի ուղղությամբ ակտիվությունը, այլ նաև միաժամանակ խթանել հաշվանդամություն ունեցող անձանց համար կյանի որակի բարձրացմանը, նրանց համար ավելի արդյունավետ սոցիալական միջավայրի և դրանում արագ ինտեգրվելու հնարավորությունների ստեղծմանը:

6.2. Բնապահպանական ազդեցություններ

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ, որոնք սակայն կկրեն ժամանակավոր բնույթ: Վերջիններս հիմնականում առնչվում են շինարարական աշխատանքների հետ, հետևաբար իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պարկտիկայի արդյունքում:

Նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվում են բնակավայրի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

✓ Օդի աղտոտում

Ծրագրի իրականացման ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներով: Հորատման, բեռնման և թափոնակույտման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K6 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.2

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Շինարարության ընթացքում հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 4 ամիս, իսկ ընդհանուր շինարարության ժամանակահատվածի համար կլինի՝ 2.5 ամիս x 22 օր x 8 ժամ = 440 ժամ/շին:

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է $G = 7942 \text{մ}^3 : 440 = 18.05 \text{մ}^3/\text{ժամ}$ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝ $18.05 \text{մ}^3/\text{ժամ} \times 1.7 \text{տ}/\text{մ}^3 = 30.68 \text{տ}/\text{ժամ}$:

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.2 \times 1 \times 0.4 \times 0.1 \times 0.6 \times 30.68 \times 10^6 / 3600 = 0.24 \text{գ}/\text{վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները շինարարական յուրաքանչյուր փուլում իրականացվող հողային աշխատանքների ժամանակ կկազմեն՝

$$0.24 \text{գ}/\text{վ} \times 440 \text{ժ}/2 \times 3600 \text{վ} / 10^6 = 0.38 \text{տ}/\text{շին}.$$

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների փուլային իրականացումը և դրանց ժամանակավոր բնույթը: Թույլատրված նորմերի սահմաններում ներկայացված արտանետումների պահումը և հնարավոր վնասակար ազդեցությունները կբացատրվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում (տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.1 միջոցառումներ), մասնավորապես փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափեխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

✓ **Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում /տես՝ ԲԿՊ, Շրջակա միջավայրի պահպանություն, 5.2 միջոցառումներ/ շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը չի գերազանցի ՀՀ-ի սահմանված նորմերը:

Աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ նախատեսվում է իրականացնել երեք ամիսը մեկ հաճախականությամբ: Սակայն

լրացուցիչ չափումներ կիրականացվեն նաև ըստ անհրաժեշտության՝ բողոքների առկայության դեպքում:

✓ **Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն**

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները, իսկ շինարարական մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի համապատասխան չափաքանակներով և ծածկող պաստառների առկայությամբ:

Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ է հասցվելու տարածքում գոյություն ունեցող քաղաքային ջրագծից:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկված են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրն օգտագործվի միայն փոշենստեցման նպատակով,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին,

✓ **Թափոնների և այլ նյութերի կառավարումը**

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա մարզադահլիճի կառուցման ընթացքում, շինարարական աղբն է, որի տեղափոխությունն ու տեղադրումը կիրականցվի շին. թույլտվությանը սահմանված վայրի և դրանում ներկայացված պահանջների համաձայն:

✓ **Աշխատանքի անվտանգություն և առողջություն**

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները կիրականացվեն կապալառուի կողմից համաձայն ԲԿՊ-ում նկարագրված ընթացակարգի (տես՝ ԲԿՊ, Արտակարգ իրավիճակների արձագանքման պլան):

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում /ազդեցության գոտում/ լանջաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր է կանխել կամ նվազեցնել շինարարական լավ պրակտիկայի արդյունքում:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ակնկալվում են հետևյալ դրական ազդեցություններ.

- տվյալ տարածքի հասարակական պայմանների բարելավում,

- մարզային կտրվածքով սպորտային մարզաձերի զանգացում,
- մարզում հանրապետական նշանակության սպորտային մրցումների անցկաման հնարավորությունների ստեղծում,
- խոցելի խմբերի (հաշվանդամներ) կյանքի որակի բարձրացում, սպորտային ունակությունների զանգացում և հասարակական կյանքին ավելի հեշտ ինտեգրում,
- բարեկարգված և կանաչապատված տարածքի կայուն օգտագործում և պահպանություն:

Նախատեսվող մարզադահլիճի առկայությունը հնարավորություն կտա մարզում ոչ միայն զարգացնել սպորտային ակտիվությունը տարբեր մարզաձների, այլ նաև միաժամանակ խթանել հաշվանդամություն ունեցող անձանց համար կյանի որակի բարձրացմանը, նրանց համար ավելի արդյունավետ սոցիալական միջավայրի և դրանում արագ ինտեգրվելու հնարավորությունների ստեղծմանը:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Նախատեսվող գործունեության համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմերին նախատեսվում է ապահովել, համաձայն բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ): ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է [հավելված 7](#)-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների կողմից կիրականացվեն կանոնավոր մոնիտորինգ ([հավելված 8](#)), որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիտորինգի դաշտային ստուգայցեր:

Տեխնիկական վերահսկողությունը պետք է իրականացնի ամենօրյա ռեժիմով, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Մարզադահլիճի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NO_x) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

- Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

Մշտադիտարկումների համար շինարարության ողջ ընթացքում նախատեսվում է հատկացնել 900 000 դրամ:

Աղյուսակ 9. Մշտադիտարկումների ժամանակացույց

Մշտադիտարկումներ, շին. փուլ/դրամ		
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NO _x) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ	18 ամիս x 40000 դրամ	720 000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ	6 ամիս x 30000 դրամ	180 000
Ընդամենը (ողջ շին. ընթացքում)		900 000

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի արտաքին շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության հետ կապված դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

ԲԱՄ-ի հիմնական գործառույթները ևս ներկայացված են ԲԿՊ-ում:

8. ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ

Շինարարական աշխատանքների ընթացքում հիմնական հնարավոր արտակարգ իրավիճակներն են հրդեհների առաջացումը, հեղուկ նյութերի արտահոսքը, վթարները՝ կապված տեխնիկայի շահագործման հետ, և աշխատողների վնասվածքները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկսելը աշխատողների հրահանգավորում ըստ նրանց կողմից իրականացվող աշխատանքի անվտանգության կանոնների:
- Հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում հրշեջ հիդրանտների տեղադրում:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակի և տրանսպորտային միջոցների ապահովում հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու առաջին բուժ. օգնության միջոցներով, աշխատողների հրահանգավորում դրանց ճիշտ օգտագործման և առաջին բուժօգնության ցուցաբերմանն վերաբերյալ:
- Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է.
 - մշտապես իրականացնել շին. հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով պետք է տեղադրվեն շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - շինարարական աշխատանքների տեղամասերում պետք է տեղադրվեն հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Օգտագործումից առաջ հեղուկ/սորուն նյութերի տեղափոխում շինարարական հարթակ և դրանց պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը կանխելու/բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին ապահովում անհատական պաշտպանական միջոցներով (ԱՊՄ): Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին առաջին բուժ. օգնության ցուցաբերում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում բժշկական հաստատություն:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, նախատեսվող շինության վտանգավոր օբյեկտները,

օրենսդրությամբ սահմանված կարգով, կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:

Կապահովվեն նաև Հայաստանի Հանրապետության կառավարության հետևյալ որոշումներով սահմանված կանոնները.

- «Էլեկտրատեղակայանքների շահագործման անվտանգության կանոնները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 21.04.2023թ. №583-Ն որոշում *(փոխարինում է «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 23.11.2006թ. №1933-Ն որոշմանը):*
- «Էլեկտրակայանների, ցանցերի և սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոնները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21.04.2023թ. №568-Ն որոշում
- «Էլեկտրատեղակայանքների սարքվածքի կանոնները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 21.04.2023թ. №592-Ն որոշում

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կապալառուն կղեկավարվի նաև Առողջապահության նախարարի 19.09.2012 թ. թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

9. ՀԱՆՐԱՑԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքում նախատեսված մարզադահլիճի կառուցատման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում շահառու և ազդակիր հանրությունն իրազեկվել է նախատեսվող գործունեության բնապահպանական ազդեցությունների վերաբերյալ:

Հանդիպումը տեղի է ունեցել 2024թ. փետրվարի 9-ին, ժամը 14:00 Արարատ քաղաքի Մշակույթի տան նիստերի դահլիճում (հասցե՝ ք. Արարատ, Շահումյան 36), որին մասնակցել են Արարատի համայնքապետարանի աշխատակիցները, համայնքի ղեկավարը, տեղակալները, ավագանու անդամները, նախագծային ընկերության (ԲԻՄ Ինջինիրինգ» ՍՊԸ) և ՇՄԱԳ իրականացվող («ԳրինԹայմ» ՍՊԸ) կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Արարատ համայնքի բնակիչները:

Հանդիպման արձանագրությունը և մասնակիցների ցուցակը բերված են [հավելված 9](#)-ում:

Հանրային քննարկումները կազմակերպվել են հանրային քննարկման և ծանուցումների իրականացման կարգի համաձայն, ըստ որի հանդիպումից նվազագույնը 21 աշխատանքային օր առաջ հանդիպման վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը հասանելի է եղել «Առավոտ» օրաթերթի 2024թ. հունվարի 11-ի համարում (թիվ 003/70004/): Հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը տեղադրված է եղել նաև Արարատի համայնքապետարանի պոշտոնական կայք էջում. <https://araratcity.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=0a7c1829-db49-435b-9643-dab14bd82f50>:

Հանրային լսման կազմակերպման և անցկացման պատասխանատու է նշանակվել Արարատի համայնքապետարանի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիայի բաժնի գլխավոր մասնագետ՝ Հ.Մկրտչյանը /Էլ.Փոստ ararat.municipality@gmail.com/, հեռ 060885555:




Շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել մինչ 2024 թվականի փետրվարի 8-ը ներառյալ իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները գրավոր ուղարկել Արարատի համայնքապետարան՝ ՀՀ Արարատ քաղաք, Շահումյան 36 հասցեով կամ ararat.municipality@gmail.com էլեկտրոնային հասցեով: Հանրությունը ունեցել է նաև հանրային քննարկումներին մասնակցելու համար նախօրոք գրանցվելու հնարավորություն՝ ararat.municipality@gmail.com էլեկտրոնային փոստի միջոցով:

Հանրային քննարկման ժամանակ իրականացված տեսաձայնագրությունը, ինչպես նաև նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ Արարատի ավագանու որոշումը ներկայացվում են սույն ՇՄԱԳ հաշվետվությանը կից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձարկման մասին», 2014 թ. հունիսի 21:
2. ՀՀՇՆ 22-01-2024 Շինարարական Կլիմայաբանություն:
3. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ. նախաձեռնում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:
4. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
5. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕП/ЕЕА, 2009:
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
8. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
9. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
10. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
11. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
12. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
13. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
14. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին: 12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» թիվ 160-Ն որոշում:
15. ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
16. www.arlis.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԱՐԱԾՔԻ ՏԵՂԱԴԻՐՔԻ ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ WGS-84 (ARMREF 02) ԱԶԳԱՅԻՆ ԳԵՈՂԵԶԻԱԿԱՆ ԿՈՈՐԴԻՆԱՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ		Ձև 1																																													
Սեփականատեր՝	Արարատ, <u>Արարատ համայնք ք.Արարատ</u>	Հաստատում են՝ «...» «...» 2024 թ.																																													
անուն ազգանուն՝ <u>Արարատ համայնք</u>	Մարզ համայնք հասցե	Համայնքի ղեկավար՝ <u>Ա.Ավետիսյան</u> Կ.Տ.																																													
	Հողատեղեկացման հիմքը																																														
																																															
Մակերես հա	0.48161	Մասշտաբ 1:500 																																													
Ծածկագիր	03-002-0003-0054																																														
Նպատակային նշանակությունը	Բնակավայրերի																																														
Գործառնական նշանակությունը	Հասարակական կառուցմամբ																																														
Լրացուցիչ նշումներ																																															
	<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <thead> <tr> <th colspan="4" style="text-align: center;">Հողամասի</th> </tr> <tr> <th rowspan="2" style="writing-mode: vertical-rl; transform: rotate(180deg);">Երկարությունը (մետր) / լայնությունը</th> <th colspan="2" style="text-align: center;">Կոորդինատները</th> <th rowspan="2" style="writing-mode: vertical-rl; transform: rotate(180deg);">Գծաչափը (մետր)</th> </tr> <tr> <th style="text-align: center;">X</th> <th style="text-align: center;">Y</th> </tr> </thead> <tbody> <tr><td>1</td><td>8473793,6813</td><td>4413791,9963</td><td>18,75</td></tr> <tr><td>2</td><td>8473787,5122</td><td>4413809,7026</td><td>1,00</td></tr> <tr><td>3</td><td>8473786,5666</td><td>4413809,3772</td><td>7,58</td></tr> <tr><td>4</td><td>8473779,4029</td><td>4413806,9120</td><td>21,85</td></tr> <tr><td>5</td><td>8473772,7667</td><td>4413827,7261</td><td>2,39</td></tr> <tr><td>6</td><td>8473775,0338</td><td>4413828,4797</td><td>8,71</td></tr> <tr><td>7</td><td>8473783,2948</td><td>4413831,2258</td><td>85,28</td></tr> <tr><td>8</td><td>8473864,2727</td><td>4413857,9612</td><td>5,15</td></tr> <tr><td>9</td><td>8473869,1627</td><td>4413859,5821</td><td></td></tr> </tbody> </table>	Հողամասի				Երկարությունը (մետր) / լայնությունը	Կոորդինատները		Գծաչափը (մետր)	X	Y	1	8473793,6813	4413791,9963	18,75	2	8473787,5122	4413809,7026	1,00	3	8473786,5666	4413809,3772	7,58	4	8473779,4029	4413806,9120	21,85	5	8473772,7667	4413827,7261	2,39	6	8473775,0338	4413828,4797	8,71	7	8473783,2948	4413831,2258	85,28	8	8473864,2727	4413857,9612	5,15	9	8473869,1627	4413859,5821	
Հողամասի																																															
Երկարությունը (մետր) / լայնությունը	Կոորդինատները		Գծաչափը (մետր)																																												
	X	Y																																													
1	8473793,6813	4413791,9963	18,75																																												
2	8473787,5122	4413809,7026	1,00																																												
3	8473786,5666	4413809,3772	7,58																																												
4	8473779,4029	4413806,9120	21,85																																												
5	8473772,7667	4413827,7261	2,39																																												
6	8473775,0338	4413828,4797	8,71																																												
7	8473783,2948	4413831,2258	85,28																																												
8	8473864,2727	4413857,9612	5,15																																												
9	8473869,1627	4413859,5821																																													
		<table border="1" style="width: 100%; border-collapse: collapse;"> <tr> <td colspan="2" style="text-align: center;">Որակավորում ունեցող անձ</td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center;">Որակավորման վկայականի համարը</td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center;">Ստորագրություն</td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center;">Իրավաբանական անձի անվանումը</td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center;">ՀՎՀՀ</td> </tr> <tr> <td colspan="2" style="text-align: center;">Ստորագրություն</td> </tr> <tr> <td style="width: 50%;">Ամիս</td> <td style="width: 50%;">Չափագրության</td> </tr> <tr> <td>ամսաթիվ</td> <td>Հատակագծի կազման</td> </tr> </table>	Որակավորում ունեցող անձ		Որակավորման վկայականի համարը		Ստորագրություն		Իրավաբանական անձի անվանումը		ՀՎՀՀ		Ստորագրություն		Ամիս	Չափագրության	ամսաթիվ	Հատակագծի կազման																													
Որակավորում ունեցող անձ																																															
Որակավորման վկայականի համարը																																															
Ստորագրություն																																															
Իրավաբանական անձի անվանումը																																															
ՀՎՀՀ																																															
Ստորագրություն																																															
Ամիս	Չափագրության																																														
ամսաթիվ	Հատակագծի կազման																																														
		Կ.Տ.																																													

Հողամասի			
Շրջարարձային (բեկման) կետեր	Կոորդինատները		Գծային չափեր
	X	Y	
9	8473869,1627	4413859,5821	28,55
10	8473896,2651	4413868,5660	34,99
11	8473907,3424	4413835,3805	1,89
12	8473908,0094	4413833,6074	5,30
13	8473903,0669	4413831,6879	1,28
14	8473902,6098	4413832,8801	1,74
15	8473900,9543	4413832,3324	3,23
16	8473898,0442	4413830,9254	1,00
17	8473897,1312	4413830,5274	2,34
18	8473895,0002	4413829,5514	3,06
19	8473892,1201	4413828,5314	3,67
20	8473888,6771	4413827,2743	2,84
21	8473886,0141	4413826,2793	0,51
22	8473885,5401	4413826,1013	1,21
23	8473884,3979	4413825,6935	0,32
24	8473884,0920	4413825,5843	1,81
25	8473882,3760	4413824,9973	3,25
26	8473879,3136	4413823,8977	0,42
27	8473878,9130	4413823,7563	3,13
28	8473875,9889	4413822,6293	0,63
29	8473875,7893	4413823,2315	84,73
30	8473796,5955	4413793,1049	3,12
1	8473793,6813	4413791,9963	

1, Սպորտ դպրոց				
Շրջարարձային (բեկման) կետեր	Կոորդինատները		Գծային չափեր	
	X	Y		
1	8473808,3136	4413813,8941	12,90	
2	8473803,9438	4413826,0314	36,90	
3	8473838,6621	4413838,5312	12,90	
4	8473843,0320	4413826,3939	36,90	
1	8473808,3136	4413813,8941		

Մասշտաբ 1:1000		
Որակավորում ունեցող անձ		
Որակավորման վկայականի համարը		
Ստորագրություն		
Իրավաբանական անձի անվանումը		
ՀՎՀՀ		
Ստորագրություն		
Ամիս ամսաթիվ	Չափագրության	
	Հատակագծի կազման	

Սահմանային հատվածի համարը՝ 46424316
 Սահմանային հատվածի անվանումը՝ ԱԶ «ՀԱՅԿ ՄԵԼԿՈՆՅԱՆ ՀԵՆՐԻԿ»
 ՀՎՀՀ 46424316
 Կ.Տ.



ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզ, Արարատ համայնք
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 79/2 _____ 07. 08. 2023 թ.

Օբյեկտ

Արարատի մարզ, Արարատ համայնքի Արարատ քաղաքի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների կատարման, Ջանգակատուն բնակավայրի մարզադահլիճի վերակառուցման աշխատանքների կատարման

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

նախագծային փաստաթղթերի մշակման համար:

Միջինից բարձր ռիսկայնության աստիճան / IV կատեգորիա /

(հակիրճ բնորոշումը, հզորությունը՝ ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Արարատի մարզ, Արարատ համայնք

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Արարատի համայնքապետարան

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը,

բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

(կառուցապատման նպատակով << օրենսդրությամբ սահմանված

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը 18 /տասնութ/ ամիս

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

- Հողամասը գտնվում է Բնակավայրերի հասարակական կառուցապատման
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
- (*) Հողամասի չափերը _____
(հողամասի սահմանները՝ կորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))
- Հողամասի առկա վիճակը կառուցապատված
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
- (*) Տրանսպորտային պայմանները ներհամայնքային ճանապարհ

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

չկան

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

համայնքային սեփականության հողեր և ընդհանուր օգտագործման տարածքներ, ավտոտնակներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

չկան

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

չկա

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԻՈՒՆՁՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

համաձայն ՀՀ կառավարության 19.03.2015թ. 596-Ն որոշման

(Ենթեղծ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

--

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

կից

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

15.0 մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

0.6

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

60 %

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%))

40 % կանաչապատում և անջրանցիկ տարածքներ

9.7. այլ պահանջներ

--

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

չկան

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

--

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

արկա

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում

արկա

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում

արկա

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը

--
(համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ

--

12.6. աղբահանություն

համայնքի կողմից տրամադրված վայրում

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

համաձայն նախագծի

(ռելիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

համաձայն նախագծի

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գրվազղ և այլն)

15. Շինարարական նյութեր

համաձայն նախագծի՝ ե/ք, մետաղական արտադրանք, ապակի և այլն

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ

Համաձայն քաղաքաշինական նորմերի

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

համաձայն ՀՀ-ում գործող հակահրդեհային նորմերի

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Համաձայն գործող նորմերի



19. Շրջակա միջավայրի պահպանում

շին. Հրապարակը սահմանագատել արգելափակողով
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Հինարարության կազմակերպում

Համաձայն քաղաքաշինական ծրագրային դրույթների և ծրագրի պահանջների
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

18 /տասնութ/ ամիս
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Համայնքի փորձաքննություն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Արարատի համայնքապետարանի, քաղաքաշինության կոմիտեի և համապատասխան գերատեսչությունների հետ
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էքզիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փուլի դրամա և նախագծի մշակման ինտեգրությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

հանրային քննարկում
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

Զանգակատուն բնակավայրի գոյություն ունեցող /մինչև 350 քմ ներքին մակերեսով/ մարզադահլիճի վերակառուցման աշխատանքները ներառում են միայն կառույցի ներքին հարդարման աշխատանքներ: Արարատ քաղաքի նոր մարզադահլիճի կառուցման աշխատանքների նախագծային և շինարարական աշխատանքներն իրականացնել Զանգակատուն բնակավայրի մարզադահլիճի վերակառուցման նախագծային և շինարարական աշխատանքներից առանձին, իրար հետ չփոխկապակցված 2 տարբեր նախագծային փաթեթներով և 2 առանձին շինարարության թույլտվությունների տրամադրմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ _____ ԱՐԱՐԱՏ _____ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

(ստորագրությունը անվան ազգանունով)




Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ _____


Կ. Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԻՐԱԴՐՈՒՅԱՆ ՄԽԵՄԱ

3.1 Գործունեության տարածքի իրադրային սխեման՝ հարակից շենք-շինությունների հողօգտագործումների վերաբերյալ տվյալներով





3.1 Իրադրային սխեման՝ նախագծային լուծումների իրականացումից հետո




Դասորդագրության համար	ԱՐԱՐԱՆ ԵՄՐՂ ԱՐԱՐԱՏԻ ԴԱՏԱՆՔԱԿԵՏՄԱՆ		Լսման օր	Դասարան
	Կաթիլ ԳՆ, Արմավիրի մարզ, Կենտրոնական շրջան, 34 թիվ 2 Փոստ - 1214 (095) 85-55-55		Կ.Ա.	Ս.Ա.Շ.
Օբյեկտի անվանում	Արարատ հասակների տղ օդադարակների կառուցում		Քաղաք	Արմավիր
Լսման օրը	Չ/Ն	Չ/Ն	ԿԱՐԱՆԱԾ	
Վճարում	Չ/Ն	Չ/Ն	ԲՈՒ ԻՆՏԵՆՏԻՎ ՍՐԵ	
Միասնական Լսման օրը	Չ/Ն	Չ/Ն	BIM ENGINEERING LLC	
Ներդրում	Չ/Ն	Չ/Ն	Քաղաքի հեռ. համար: +374 (04) 494943	
Միասնական Լսման օրը	Չ/Ն	Չ/Ն	E-mail: info@bime.am	
Ներդրում	Չ/Ն	Չ/Ն		

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ







Հաշմանդամների տեղաշարժի հատակագիծ

ՊԱՅԱՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


- Տակտիլային վան ներկված մարերես
- Տակտիլային անհարթ մակերևույթ "Ուղղության փոփոխություն"
- Տակտիլային անհարթ մակերևույթ "Աստիճան վերև-ներքև"
- Տակտիլային անհարթ մակերևույթ "Ուղղիղ"
- M1-M4 խմբու հաշմանդամների տեղաշարժի սխեմա
- Թեքահարթակների բազրիչ չճանաչարկող մետաղից, h=100մմ ելուստներով
- Կոշիկների մաքրման մետաղական ճաղաշար
- Կեղտի հավաքման սողոսղային ծածկույթ


*Կանչի համակարգը տես Կապեր բաժինը

1-ին հարկ		
№	Անվանում	Մակերես մ2
101	Նախնարահ	9,83
102	Նախնարահ	6,90
103	Սպասարահ	79,96
104	Ատոհճանակետայկ №1	16,53
105	Բուսվեռ	18,14
106	Մարզարահ ծանրածող	72,1
107	Մարզարահ ՄԲԱ	53,5
108	Տեխնիկական սենյակ	9,02
109	Հաշմանդամների սենյակ	5,56
110	Սանհանգույց սղոսղներ	4,78
111	Սանհանգույց արջիկներ	3,88
112	Հանդերձարան տղաներ №1 16 հոգի	51,69
113	Սանհանգույց տղաներ ՄԲԱ	5,26
114	Սանհանգույց	5,40
115	Լողանսնյակ	6,84
116	Հանդերձարան արջիկներ №2 16 հոգի	55,94
117	Սանհանգույց արջիկներ ՄԲԱ	5,37
118	Սանհանգույց	5,10
119	Լողանսնյակ	6,80
120	Միջանցք	72,28
121	Ատոհճանակետայկ №2	16,53
122	Էլեկտրամուղման սենյակ	14,06
123	Նախամուտք	9,25
124	Մարզագույցի պահեստ	14,47
125	Կարգապատման էլեկտրական	14,50
126	Մարզարահ	1 413,67
		1 977,50 մ2

Պատվիրատու Քաղցք	ՄՐԱՐԱՏ ՄԱՐԶ, ՄՐԱՐԱՏԻ ՀԱՍՏՈՒՋԱԳՆԱՐԱՆ <small>Քաղցք 34, Կարաթի մարզ, Արարատ Կոմիտասի թղթ, 34 256 Phone: +374 (09) 85-85-55</small>		Նախագիծը Ո.Յ.	Հաստատելը Ա.Ա.
	Օբյեկտի անվանում		Format A3(297x420)	Date 24.10.2023
Նախագիծի Փուլ ՍՆ ՀԱՄ	1-ին հարկ Տեղաշարժի սխեմա		ԿԳՍԱՆՈՒՄ	
Կատարում			ԲԻՄ ԻՆՋԵՆԵՐԻՆԳ ՍՊԸ BIM ENGINEERING LLC Գեմ/Phone: +374(94) 484843 E-mail: info@bime.am	
Միջանկյալային Նախագիծ փոփոխ Նկարագիր	Հաշմանդամների համար մարդկային ապահովման ուղղված միջոցառումներ			

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԽԵՄԱ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑՑ






ՕՐԱՅՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԴԳ	Աշխատանքների անվանումը	Տևողությունը	Տարի																	
			1-ին					2-րդ												
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	օկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	հունվար	փետրվար							
1	Լսարանադարձության աշխատանքներ, տանայի հարցում	2																		
2	Փակ մարզադահլիճ	16,5																		
3	Վարչական շենք	8,5																		
4	Հանրապետական ցանց	2																		
5	Տրանսպորտային ցանց	0,5																		
6	Կենցաղային կրթչոր ցանց	0,5																		
7	Անվտանգության ցանց	1																		
8	Տնտեսական ցանցեր	1																		
9	Էլեկտրատրանսպորտային ցանցեր	1																		
10	Տարածքի բարեկարգում	3,5																		

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ



ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ (ԲԿՊ)

Ծրագրի գործողություններ	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ	Առաջարկվող մեղմացնող միջոցառումներ	Պատասխանատու մարմին
Ն Ա Խ Ա Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Փ ՈՒ Լ			
1. Հանրային լսումներ, հանրության իրազեկում	Հանրության ոչ պատշաճ տեղեկացվածությունը և հնարավոր բողոքները կարող են նախատեսվող գործունեության իրականացման ժամկետների ձգձգման պատճառ դառնալ:	1.1. Մարզադահլիճի կառուցման նախագծի և ԲԿՊ-ի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը անցկացրվել է ա.թ. փետրվարի 9-ին՝ ժամը 14:00-ին Արարատ քաղաքի Մշակույթի տան նիստերի դահլիճում (հասցե՝ ք. Արարատ, Շահումյան 36): Հանրային քննարկման հայտարարությունը տպագրվել է «Առավոտ» օրաթերթի հունվարի 11-ի համարում:	Արարատի համայնքապետարան
2. Մրցութային և պայմանագրային փաստաթղթերի պատրաստում	ԲԿՊ-ի պահանջներն անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում, որի արդյունքում հնարավոր են բնապահպանական բացասական ազդեցություններ՝ սպորտդահլիճի շինարարության և շահագործման փուլերում:	2.1. Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև կապալառուի պայմանագրային փաստաթղթերում:	Արարատի համայնքապետարան
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ			
Առողջություն և աշխատանքային անվտանգություն			
3. Շինարարական հրապարակի բոլոր գործողությունները	ԲԿՊ-ի պահանջների չկատարումը և բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող են շրջակա միջավայրի վատթարացման պատճառ դառնալ: Շինհրապարակի ոչ պաշաճ կազմակերպման պատճառով աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց ցանկացած վնասվածքը անընդունելի է:	<p>3.1. Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում:</p> <p>3.2. Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար. (ցանկապատում, պահակակետ և այլ):</p> <p>3.3. Անհրաժեշտ է բացառել անվտանգության կանոնների խախտման դեպքերը (օր. չհսկված էլեկտրական գործիքների առկայությունը շինհրապարակում և այլն):</p> <p>3.4. Անհրաժեշտ է ապահովել կրակմարիչի առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում և կիրառվող տեխնիկայում:</p> <p>3.5. Անհրաժեշտ է ապահովել առաջին բուժ օգնության միջոցների առկայությունը և դրանց հեշտ հասանելիությունը շինհրապարակում:</p> <p>3.6. Բանվորական և այլ անձնակազմը պետք է ապահովվի սեզոնային արտահագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):</p> <p>3.7. Աշխատանքային անվտանգության և առողջության հետ կապված միջադեպերը պետք է գրանցել:</p> <p>3.8. Աշխատողները պետք է անցնեն աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ինչը պատշաճորեն պետք է գրանցվի համապատասխան գրանցամատյանում:</p> <p>3.9. Խստորեն պետք է պահպանվեն ՀՀ օրենսդրությամբ պահանջվող</p>	Կապալառու

		աշխատանքային անվտանգության պահանջներն ու նորմերը:	
Հանրության հետ կապ և հանրային իրազեկում			
<p>4. Հանրության իրազեկման բարձրացում, բողոքարկման մեխանիզմ</p>	<p>Ազդակիրների թերի իրազեկվածությունը, տեղեկատվության և փոխըմբռնման պակասը կարող է հանգեցնել դժգոհությունների, որի արդյունքում հնարավոր են նախատեսվող գործունեության ժամկետների հետաձգումներ:</p>	<p>4.1. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղադրել ցուցանակներ / տեղեկատվական վահանակներ, որոնք պարունակում են տեղեկատվություն շինարար կազմակերպության, նրա գտնվելու վայրի, աշխատանքային ժամերի, պատասխանատու անձանց և նրանց հեռախոսահամարների/ էլեկտրոնային հասցեների մասին:</p> <p>4.2. Շին հրապարակում անհրաժեշտ է ունենալ բողոքների գրանցամատյան և նշանակել պատասխանատու անձ, ով 15 օրյա ժամկետում պետք է պատասխանի դիմորդին հարցի լուծման վերաբերյալ:</p>	<p>Արարատի համայնքապետարան, Կապալառու</p>
Շրջակա միջավայրի պահպանություն			
<p>5. Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ, շինարարական այլ աշխատանքներ</p>	<p>1. Տրանսպորտային միջոցների երթևեկությունից, ինչպես նաև շին տեխնիկայի շահագործուից առաջացած փոշու և այլ արտանետումների ազդեցությունը;</p> <p>2. Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակար-դակի աճի հետևանքով ազդեցությունը:</p>	<p>5.1. Օդի աղտոտման և փոշու կառավարում</p> <p>5.1.1. Փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով շինհրապարակի տարածքում պարբերական ջրցանումների իրականացում:</p> <p>5.1.2. Օդի որակի չափագրումների իրականացում ըստ անհրաժեշտության՝ ազդակակիր անձանց բողոքների դեպքում:</p> <p>5.1.3. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և պահել կուտակված նյութերը հնարավորինս ծածկված վիճակում փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար;</p> <p>5.1.4. Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>5.1.5. Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով:</p> <p>5.1.6. Անհրաժեշտ է ապահովել շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողների լվացումը:</p> <p>5.2. Աղմուկի և թրթռումների կառավարում</p> <p>5.2.1. Շին. հրապարակում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին, իսկ չափագրումներ կիրականացվեն ըստ սահմանված ժամանակացույցի:</p> <p>5.2.2. Աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին՝ սահմանափակվելով միայն թույլատրված ժամերի միջակայքում:</p> <p>5.2.3. Մեքենաների ապահովում խլացուցիչներով: Անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում:</p> <p>5.2.4. Շինարարության մեջ ներգրավված բանվորներին ԱՊՄ-ով, այդ թվում՝ ականջակալներով, ապահովում:</p> <p>5.3. Բուսականության պահպանության կառավարում</p> <p>5.3.1. Հնարավոր վնասման ենթակա ծառերի և թփերի պահպանման միջոցառումների իրականացում՝ ուղղված դրանք պաշտպանությանը շին գործողություններից, թափոնների տեղադրումից, փոշու ազդեցությունից (պաշտպանիչ պատտռներ, ջրցանում) և հնարավոր այլ</p>	<p>Կապալառու</p>

		ազդեցություններից:	
Շինարարական հրապարակի կազմակերպում			
6. Շինհրապարակի կազմակերպում	Շինհրապարակի ոչ ճիշտ կազմակերպումից բխող ազդեցություններ	<p>6.1. Շին հրապարակն անհրաժեշտ է կազմակերպել բացառապես կառուցապատման ենթակա տարածքի ներսում:</p> <p>6.2. Շին հրապարակի կազմակերպման սխեմայում պետք է նշված լինեն շին. նյութերի պահեստավորման, նյութերի և թափոնների ժամանակավոր կուտակման տեղերը, մեքենաների և սարքավորումների կայանատեղերը և այլն:</p> <p>6.3. Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի ցանկապատում, համապատասխան տեղեկատվական ցուցանակի ու մուտքն արգելող նշանների տեղադրում:</p> <p>6.4. Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել բաց տեղամասերի քանակը, հետլիցքն իրականացնել հնարավորինս կարճ ժամկետներում, տեղադրել նախագուշացնող նշաններ:</p> <p>6.5. Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակի տարածքից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված լվացման կետերում:</p>	Կապալառու
Երթևեկության կառավարում			
7. Շինհրապարակ մուտք ու ելք գործող մեքենաներ	<p>Երթևեկության հնարավոր ազդեցություններն են.</p> <ul style="list-style-type: none"> • երթևեկության խափանումներ • երթևեկության հետ կապված վտանգներ և անվտանգության խնդիրներ • փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակի աճ • հասարակական ճանապարհների վրա ցեխի և շին աղբի տարածում • շինարարական ծանր սարքավորումների և փոխադրամիջոցների կողմից ճանապարհների վնաս 	<p>7.1. Մեքենաների և բեռնատարների երթևեկությունը անհրաժեշտ է կազմակերպել հասարակական երթևեկությանը և հիմնական հանրային ճանապարհին նվազագույն անհարմարություններ և վնաս պատճառելու սկզբունքով;</p> <p>7.2. Անհրաժեշտության դեպքում, ձեռնարկել ճանապարհին հասցրած վնասների վերականգման աշխատանքներ՝ ապահովելով ճանապարհների նախնական վիճակը:</p> <p>7.3. Դեպի շինարարական հրապարակ մուտքն ու ելքը պետք է կազմակերպել ընդհանուր երթևեկության և հասարակական անվտանգության համար նվազագույն խոչընդոտներով:</p> <p>7.4. Անհրաժեշտ է խուսափել գործողություններից, որոնք կարող են ճանապարհների խցանումների պատճառ դառնալ:</p> <p>7.5. Մեքենաների և սարքավորումների կայանատեղին անհրաժեշտ է կազմակերպել միայն սահմանված վայրերում:</p> <p>7.6. Անհրաժեշտ է ապահովել բեռնատարների ծածկով երթևեկումը շինհրապարակը լքելիս:</p> <p>7.7. Անհրաժեշտ է իրականացնել փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի կանոնավոր գնում՝ վառելիքային և յուղի արտահոսքը կանխելու համար:</p> <p>7.8. Անհրաժեշտ է դադարեցնել արտահոսքեր ունեցող մեքենաների աշխատանքը և դրանք փոխարինել պատշաճ վիճակում գտնվող մեքենաներով:</p>	Կապալառու
Արտակարգ իրավիճակների կառավարում			
8. Վտանգավոր նյութերի օգտագործում	Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով	8.1. Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;	Կապալառու

<p>և այլ արտակարգ իրավիճակների դեպքեր (դժբախտ պատահարներ և այլն)</p>	<p>հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:</p>	<p>8.2. Շինհրապարակը պետք է ապահովված լինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար:</p> <p>8.3. Վտանգավոր նյութերի կառավարումը պետք է իրականացնել համապատասխան ՀՀ օրենսդրական պահանջներին;</p> <p>8.4. Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:</p> <p>8.5. Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:</p> <p>8.6. Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար:</p> <p>8.7. Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:</p> <p>8.8. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:</p> <p>8.9. Արտակարգ պատահարի դեպքում դրանք պետք է գրանցվեն համապատասխան գրանամատյանում:</p>	
--	--	---	--

Թափոնների և նյութերի կառավարում

<p>9. Շինհրապարակ և շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին աղբի տեղադրումը անհամապատասխան վայրերում, ջրահեռացման համակարգ ներթափանցող թափոնները և աղտոտիչները և շինարարական այն նյութերը, որոնք չեն մաքրվում շինհրապարակից, իրենցից ներկայացնում են պոտենցիալ վտանգ:</p>	<p>9.1. Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:</p> <p>9.2. Կանոնավոր կերպով (ամենաուշը 2 օրը մեկ) շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շին. թափոններն ու աղբը՝ փոշու և շին աղբի երկարատև կուտակումը և երթնեկության խոչընդոտները կանխելու համար;</p> <p>9.3. Շին հրապարակի տարածքում անհրաժեշտ է հատկացնել շին աղբի նախնական կուտակման վայր:</p> <p>9.4. Շինարարական հավաքված վտանգավոր թափոնները պետք է պատշաճ կերպով հավաքվեն և հեռացվեն համապատասխան արտոնագիր ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>9.5. Պետք է կատարվեն թափոնների հեռացման վերաբերյալ համապատասխան</p>	<p>Կապալառու</p>
---	--	---	------------------

		<p>գրանցումներ/գրառումներ՝ որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ և նախատեսվածի համաձայն:</p> <p>9.6. Կենցաղային աղբի հավաքումը պետք է իրականացվի դրա համար նախատեսված տարրաներում և պարբերաբար հեռացվի համապատասխան աղբահավաք կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:</p> <p>9.7. Անհրաժեշտ է բացառել շինանյութերի և շին. աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ մասնավոր կամ հասարակական տարածքում, ինչպես նաև շին. աղբի հեռացման նպատակով հասարակական աղբամանների օգտագործումը:</p>	
Աշխատողների վերապատրաստում			
10. Աշխատողների վերապատրաստում	Թերի իրազեկվածության և տեղեկատվության պակասից բխող ազդեցություններ:	<p>10.1. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր աշխատողների համար ԲԿՊ պահանջների մասին դասընթացներ՝ այդ թվում թափոնների ճիշտ կառավարման, տարածքը մաքուր պահելու և այլն;</p> <p>10.2. Բոլոր աշխատողներին անհրաժեշտ է իրազեկել աշխատանքի անվտանգության և տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ;</p>	Արարատի համայնքապետարան, Կապալառու
Աշխատանքային տեղամասի վերականգնում, բարեկարգում, տարածքի կանաչապատում			
11. Շինհրապարակի վերականգնում, տարածքի բարեկարգում 12. Կանաչապատում	Անհրաժեշտ է շինհրապարակից հեռացնել շին. տեխնիկան, բոլոր շին պարագաները, շինարարական նյութերը , թափոնները և այլն:	<p>12.1. Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատը և այլն:</p> <p>12.2. Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները;</p> <p>12.3. Անհրաժեշտ է մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից, հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը;</p> <p>12.4. Անհրաժեշտ է կատարել նախագծով նախատեսված բարեկարգման աշխատանքները:</p> <p>12.5. Անհրաժեշտ է ապահովել կանաչապատման աշխատանքները՝ դրանք համաձայնեցնելով Արարատի համայնքապետարանի հետ:</p>	Կապալառու
Հ Ե Տ Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Շ Ա Չ Ա Գ Ո Ր Ծ Ս Ա Ն Փ ՈՒ Լ			
13. Թերությունների վերացման աշխատանքներ	Շինարարական փուլի համար սահմանված բոլոր ազդեցությունները	13.1. Անհրաժեշտ է ապահովել նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատճած իրականացումը:	Կապալառու

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ/ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Վայր/ Գործողություն / Փուլ	Մոնիտորինգի ենթակա պարամետրեր	Մոնիտորինգի կետեր	Մոնիտորինգի գործիքներ/ մեթոդներ	Բնապահպանական գործողությունների ցուցանիշ	Պատասխանատուն ը	Մոնիտորինգի հաճախականությ ուն
Շ Ի Ն Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն Փ ՈՒ Լ						
1. Հանրային լսումներ և կապը հանրության հետ	- Հանրության տեղեկացվածությունը շինարարության փուլերի վերաբերյալ - Ազդակիր կողմերի տեղեկացվածությունն ԲԱՄ-ի վերաբերյալ	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգումներ, - տուգայցեր շին տեղամասեր, - հանրային լսումներ, - բողոքների գրանցամատյանի ստուգումներ	Բողոքներին արձագանքման մեխանիզմն իրականացվել է բոլոր պահանջներին համապատասխան	Արարատի համայնքապետարան, Կապալառու	Հանրային լսումները՝ շին աշխատանքները սկսելուց առաջ, ԲԱՄ-ը
2. Շրջակա միջավայրի պահպանություն	- փոշու և այլ օդի աղտոտիչների արտանետումներ, - աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացում	շին. հրապարակ,	- ակնադիտական ստուգումներ՝ շին. հրապարակ ստուգայցերի միջոցով, - բողոքների գրանցամատյանի գրառումների ստուգում; - փոշու, աղմուկի, թրթռումների մակարդակների գործիքային չափում և վերլուծություն:	- գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը, - փոշու, աղմուկի և թրթռումների մակարդակը գտնվում է ՀՀ գործող նորմերի սահմաններում	Արարատի համայնքապետարան, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
3. Շին աղբի և թափոնների տեղադրման վայրեր	- շին աղբի և թափոնների տեղադրման գտնվելու վայրը և կառավարումը:	Շին աղբի և թափոնների տեղադրման վայրի հարևանությամբ բնակչությանը պատճառված անհարմարություններ:	- փաստաթղթերի ստուգում	- Շին աղբի և թափոնների տեղադրման վայրը համապատասխանում է պետ. մարմինների կողմից թույլատրված տարածքին, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	Արարատի համայնքապետարան, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
4. Երթևեկության և մոտեցման ուղիների կառավարումը	- երթուղիների և մոտեցման ուղիների գտնվելու վայրերը; - հարևան բնակչությանը պատճառվող անհարմարությունները և անվտանգության հարցերը, ճանապարհներին և այլ կառույցներին պատճառվող վնասներ:	Ճանապարհների օգտագործում սարքավորումների և նյութերի տեղափոխության համար, շինհրապարակի մոտեցման մուտքերը	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ կատարած ստուգայցեր	- Երթևեկության և մոտեցման ուղիների համապատասխանությունը, - գրանցամատյանում գրանցված բողոքների քանակն ու կարևորությունը	Արարատի համայնքապետարան, Կապալառու	Կանոնավոր ժամանակացույցին համապատասխան
5. Թափոնների և շին. նյութերի կառավարում	- Շինարարական թափոնների և նյութերի կառավարումը	շին. հրապարակ	- փաստաթղթերի ստուգում, - շինհրապարակ, թափոնավայրեր կատարած ստուգայցեր	- շին աղբը, կենցաղային աղբը, ոչ պիտանի և ավելցուկային նյութերի քանակ-	Արարատի համայնքապետարան,	

	շինարարության ընթացքում			ները կառավարվում են Պլանին համապատասխան և տեղադրվում են միայն թույլատրված վայրում, - թափոնների գրանցամատյանը մշակված է և պատշաճ վարվում է:	Կապալառու	
6. Շինհրապարակի վերականգնում, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների, սանիտարահիգիենիկ կանոնների պահպանում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	- շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է:	Տեղամասեր կատարած ստուգայցեր	- Աշխատողների սանիտարահիգիենիկ պայմանները համապատասխանում են ՀՀ առողջապահության նախարարի 2012 թ. սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջներին: - Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգն իրականացված է համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N87 արձանագրություն պահանջների: - Շինհրապարակի վերականգնման և բարեկարգման պլանն առկա է: - Բոլոր մակերեսներն՝ այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են մինչև սկզբնական վիճակը:	- Պահպանված են շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանման ուղղված մոնիթորինգը և սարքավորումները հեռացված են շինհրապարակից,	Արարատի համայնքապետարան, Կապալառու	
Շ Ա Հ Ա Գ Ո Ր Ծ Մ Ա Ն (Թ Ե Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Վ Ե Ր Ա Ց Մ Ա Ն) Փ ՈՒ Լ						
7. Թերությունների վերացման աշխատանքներ	- Աղմուկի, օդի աղտոտիչների և այլ բնապահպանական ազդեցություններ	մարզադահլիճի տարածքի սահմաններում	Չափումներ	Աղմուկի և թրթռումների, հողի և օդի որակի չափագրումներ՝ ստուգելու համար համապատասխանությունը ՀՀ օրենսդրական պահանջներին:	Արարատի համայնքապետարան, Կապալառու	
8. Տարածքի բարեկարգում	Թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Բարեկարգման բոլոր տեղամասերը	Ստուգայցեր	Թփերի և խոտածածկույթի սանիտարական վիճակի ստուգումներ	Արարատի համայնքապետարան	

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

Արարատի մարզի Արարատ համայնքի Շահումյան փողոց 46 հասցեում փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման վերաբերյալ (1-ին հանրային քննարկում)

Ք. Արարատ **09.02.2024թ.**

2024թ. փետրվարի 9-ին ժ. 14:00-ին ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի «Մշակույթի և սպորտի կենտրոն» ՀՈՒԿ-ի նիստերի դահլիճում (հասցե՝ ք. Արարատ, Շահումյան 36), տեղի ունեցավ Արարատ քաղաքի Շահումյան փողոց 46 հասցեում փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հասանելի է եղել հանրության համար, ինչպես նաև տեղադրված է եղել Արարատի համայնքապետարանի պաշտոնական կայքում, իսկ շահագրգիռ հանրությունը հնարավորություն է ունեցել մինչ փետրվարի 8-ը ներառյալ իր առաջարկությունները, դիտողություններն ու կարծիքները գրավոր ուղարկել նաև Արարատի համայնքապետարան, ինչպես նաև նախօրոք գրանցվել հանրային քննարկումներին մասնակցելու համար:

Հանրային քննարկմանը մասնակցել են Արարատի համայնքապետարանի աշխատակիցները, նախագծող («ԲԻՄ Ինժեներինգ» ՍՊԸ) և ՇՄՄԳ («Գինեթայն» ՍՊԸ) իրականացնող ընկերությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Արարատ համայնքի քննիչները:

Նախագծի ներկայացում և քննարկում

Արարատի համայնքապետարանի պարոն Ա. Ավետիսյանը հանդես եկավ բացման խոսքով, ողջունեց հանդիպման մասնակիցներին և ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը: Նա նշեց, որ Արարատի համայնքապետարանի նախաձեռնությամբ մշակվել է «Արարատ քաղաքի Շահումյան 46 հասցեում փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման նախագիծը», որը համաձայն ՀՀ օրենսդրության ենթակա է բնապահպանական փորձաքննության և այսօր հանրային քննարկման առաջին փուլն է: Ա. Ավետիսյանը ներկայացրեց հանրային քննարկման նպատակը, որը նախատեսվող գործունեության մանրամասներին ներկայացումն է և նախատեսվող գործունեության և շրջակա միջավայրի վրա նրա հնարավոր ազդեցությունների վերաբերյալ շահագրգիռ հանրության արձագանքի ստացումն է: Նա հավելեց, որ հանրային քննարկումների կարգի փոփոխման հետ կապված, այս տարի սա առաջին քննարկումն է՝ ավագանու անդամների ներկայությամբ ձևաչափով:

Այնուհետև նա խոսքը փոխանցեց բնապահպանության մասնագետ Քրիստինե Մահակյանին:

Ք. Մահակյանը Նա հավելեց, որ նախագիծը մշակվել է ճարտարապետաստակագծային առաջարկների պահանջներին, ՀՀ քաղաքաշինական և նորմատիվ փաստաթղթերի, ՀՀ գործող շինարարական նորմերի, ինչպես նաև Պատվիրատուի պահանջների համաձայն:

Ք.Մահակյանի կողմից նախ ներկայացվեցին նախագծի տեխնիկական ցուցանիշներին և ճարտարապետական լուծումներին վերաբերյալ մանրամասներ: Նա նշեց, որ փակ ունիվերսալ մարզադահլիճն իրականացվելու է երկաթ-բետոնյա կարկասային կոնստրուկտիվ համակարգով, իսկ ճարտարապետական լուծումները ընդունվել են Հինարարության ընդհանուր ստանդարտներին, սանիտարական ստանդարտներին, ինչպես նաև հրդեհային անվտանգության ստանդարտների պահանջներին համապատասխան: Բոլոր լուծումները համապատասխանում են նաև էներգաարդյունավետության ժամանակակից պահանջներին և շենքի հասանելիության պահանջներին՝ բնակչության սակավ շարժունակ/հաշվառյալ խմբերի համար:

Նախագծված մարզադահլիճի (ներառյալ՝ կից սպասարկող օժանդակ հատվածը) զբաղեցրած մակերեսը կազմում է 2133 ք.մ:

Նախագծային լուծումներն իրականացվել են այնպես, որ նախատեսվող շինությունը հանդիսանալու է Շահումյան 46 հասցեում ադրեն իսկ գոյություն ունեցող գործող մարզադահլիճի շենքի տրամաբանական շարունակությունը՝ ընդլայնելով մարզումների հնարավորությունները:

Նախագծված մարզադահլիճը նախատեսված է լինելու հանրապետական նշանակության մրցումներ անցկացնելու համար: Այն բաղկացած է մարզադահլիճից և կրան օժանդակող շինությունից, որոնք կազմում են մեկ ընդհանուր արդյունքի հանդիսանալով իրար շարունակություն և ունենալով միևնույն լայնությունները:

Մարզադահլիճը նախատեսված է լինելու ուսումնական և ուսումնամարզական պարասպորտներին և հանրապետական մակարդակի մինի ֆուտբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի մրցումների համար, որտեղ նախատեսված են նաև տարածքներ մարտարվեստի և ծանրամարտի համար: Մարզադահլիճը նախատեսվում է զինել անհրաժեշտ գույքով և մարզման սարքերով:

Մարզադահլիճում լինելու է տրիբունայի հատված՝ 5 շարք նստատեղերով, որոնց ընդհանուր քանակը նախատեսված է 500 տեղ:

Մարզադահլիճին կից տեղակայված է լինելու նրան սպասարկող օժանդակ հատվածը, որը պայամանակառեն կարելի է անվանել վարչական հատված, որտեղ լինելու են բոլոր այն հատվածները, որոնք անհրաժեշտ են մարզադահլիճի ֆունկցիոնալ գործելու համար:

Մարզադահլիճի շենքի այդ օժանդակ վարչական հատվածում տեղակայված են լինելու.

- սահմանափակ հնարավորություններով անձանց համար նախատեսված մագապարահ՝ համապատասխան սարքավորումներով,
- ծանրածոդի մարզադահլիճի ուսումնական պարասպորտներին անցկացման համար,
- բնցքամարտի մարզադահլիճի տրեննժողի մարզադահլիճի,
- մարզիչների սենյակ՝ համապատասխան սանհանգույցով և լոգարանով,
- հանդերձարաններ աղջիկների և տղաների համար, համապատասխան սանհանգույցներով և լոգապահիչներով,
- առանձին սանհանգույցներ նախատեսված սահմանափակ հնարավորություններով անձանց համար, ըստ սեռերի:
- մարզագույքի պահեստ՝ կախված մարզաձևից,
- բուժկետ,
- ինժեներական սեկյակներ, ինժեներատնտեսական բյուր:

Հանդերձարանները փակված են միջանցքով, ինչը թույլ է տալիս բացառել մարզիկների և հանդիսատեսի հոսքերի հատումը:

Մարզադահլիճը նախագծված է մուտքի ճանապարհներով և կոմունալ հարմարություններով, որոնք պահանջում են ողջ շենքի կենսական գործառնությունները:

Փակ ունիվերսալ մարզադահլիճի բոլոր տարածքներն սպանովված են անհրաժեշտ թվով սպակներտնացված տարիանման ելքերով՝ հազեցած թեքահարթակներով, համաձայն գործող ստանդարտներին, ներառյալ՝ սահմանափակ հնարավորություններով անձանց (ՍՀՍ) համար: Տարիանման ելքերի ուղիների պատերի, հատակների և առաստաղների հարդարումը նախատեսվում է կատարել ոչ այրվող նյութերից՝ համաձայն հրդեհային անվտանգության պահանջներին:

Տարածքում առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման, հեռախոսային տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Այնուհետև Ք. Մահակյանն անդրադարձավ նախագծի շրջանակներում իրականացրած բնապահպանական և աղբիջակման հնարավոր ազդեցությունների ուղղությամբ իրականացված ուսումնասիրություններին: Նա նշեց, որ բացահայտվել են ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող դրական և բացասական ազդեցությունները և առաջարկվել դրանց ուղղությամբ անհրաժեշտ մեղմացող միջոցառումները: Նա ներկայացրեց բնապահպանական կառավարման պլանում ամփոփված բնապահպանական և աղբիջակման ազդեցությունները, ինչպես նաև դրանց մեղմացման ուղղությամբ առաջարկվող միջոցառումները:

Նշվեց, որ ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվող աշխատանքները չեն թողնի բացասական ազդեցություն տարածքի շրջակա միջավայրի վրա: Որոշակի բացասական ազդեցություններ կանխատեսվում են շինարարության փուլում (օր.՝ փոշի, սղմված, շինարարական և

կենցաղային աղբ), որոնք սակայն կլինեն սահմանափակ, տեղային, կունենան ժամանակավոր բնույթ և կլինեն կառավարելի:

Ք. Սահակյանի կողմից կարևորվեց, որ նախագծային փաստաթղթերը պարունակում են տարածքի բարեկարգման և կանաչապատման վերաբերյալ լուծումներ: Բարեկարգման աշխատանքները ներառում են ավտոճանապարհների և մայրքերի կառուցում ու բարեկարգում, տեղանքի հարավային մասում բաց մարզահրապարակների (բասկետբոլի խաղահրապարակ, բաղմինտոնի մարզադաշտ) ստեղծում, բացօդյա կայանատեղիների կազմակերպում: Նա նշեց, որ կանաչապատման համար ընտրված թփա- և ծառատեսակներն իրենց էկոլոգիական, կենսաբանական և կլիմայական առանձնահատկություններով հարմարված են նշված տեղանքի բնակլիմայական պայմաններին և կկատարեն իրենց սանիտարահիգիենիկ և գեղագիտական գործառնությունները:

Ամփոփելով իր ելույթը Ք.Սահակյանը նշեց, որ բնապահպանական փորձաքննության շրջանակներում նախատեսվում է անցկացնել ևս մեկ հանրային քննարկում, որին մասնակցելու է նաև շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը, ուստի համայնքի բնակիչները նախատեսվող գործունեության վերաբերյալ իրենց դիտողություններն ու առաջարկությունները ուղղելու հնարավորություններ առաջիկայում ևս կունենան:

Մասնակիցների կողմից բարձրագլեցին հետևյալ հարցերը.

N	Հարց	Պատասխան
1.	<p><u>Արմեն Հարությունյան</u> <u>Արարատի ավազանու անցավ</u> Արդյոք կան տվյալներ, թե ինչ ժամկետների մասին է խոսքը, և ինչ գումարների ներդրման մասին է խոսքը:</p>	<p><u>Քննարկականության մասնագետ Ք.Սահակյան</u> Ժամկետների մասով ասեմ, որ դեռևս փորձաքննության փուլում ենք, և բնապահպանական փորձաքննությունից զատ նախագիծն անցնելու է նաև համալիր փորձաքննություն: Այս երկու փորձաքննությունների դրական եզրակացություններից հետո միայն հնարավոր կլինի Բուն շինարարության ժամկետը նախագծով նախատեսված է 18,5 ամիս:</p> <p><u>Արարատի համայնքապետ Ա. Ավետիսյանը հավելեց.</u> Գումարների մասով ավելացնեմ, որ նախատեսվող գործունեության արժեքը մոտ 970 մլն. դրամ է կազմում, որից համայնքի ներդրումը կազմում է 40%, իսկ պետական սուբսիդիան՝ 60%, հաշվի առնելով նաև, որ Զանգակատում ևս նախատեսված է մարզադպրոցի վերանորոգում: Համայնքը բավականին աշխատանքներ է տարել, և այդ փորձը կա դեռևս Արարատ գյուղի և Երասխի ծրագրերից, որտեղ ևս մարզադպրոցներ են կառուցվում, և այսօր ունենք շահագրգիռ դեմքեր կազմակերպություններ, որոնք ներդրել են արդեն մոտ 105 մլն. դրամ նախորդ դեպքերում և այս դեպքում պատրաստ են ներդրել ևս 150 մլն. դրամ, որի արդյունքում համայնքի ներդրումը պակասում է ևս 5%-ով՝ դառնալով 35%: Այսինքն ստացվում է այս դեպքում ունենաք ամենամիներալ թվերը: Այս մարզադպրոցի հետ կապված դեռևս անցած տարվա ապրիլից մենք բաց ձևաչափով լուծումներ ենք կազմակերպել հավանություն ստացել ենք կառավարության կողմից և քանի որ հողատարածքի չափը փոքր էր, մենք աշխատանքներ տանում այն ընդլայնելու ուղղությամբ և խնդրել ենք կառավարությունից մոտ 1200 ք.մ. լրացուցիչ հողատարածք տրամադրելու համար, որն արդեն շրջանառության մեջ է: Եթե հաշվի առնենք այս գործընթացը, ինչպես նաև ՇՄԱԳ եզրակացության ձևով բերումը հնարավորինս սեղավ ժամկետներում, որին գուզահետ նախագիծը կուղարկվի նաև համալիր փորձաքննության, ապա մենք հույս ունենք պլանավորվածի համաձայն շինարարությունը սկսել 2024 թվականին և ավարտել 18 ամիս անց՝ 2025 թվականին:</p>
2.	<p><u>Արմեն Հարությունյան</u> <u>Արարատի ավազանու անցավ</u> Մոդելավորված տեսքով ինչ-որ</p>	<p><u>Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ</u> Նախագծային փաթեթը, որը տրված է համայնքապետարանին, պարունակում է բոլոր մանրամասները՝ այդ թվում գծագրեր, արտաքին տեսքեր և այլն:</p>

<p>բան կա, որ տեսնեք նախագծային լուծումները:</p>	<p><u>Արարատի համայնքապետ Ա. Ավետիսյանը հավելեց.</u> Եթե նախագիծն ուզում եք ծանոթանալ, ապա անեմ, որ այն բավականին բարդ կառույց է և ուղղակի թույլատրելի այն խոսքեր, ինչ-որ առաջարկներ ու փոփոխություններ տալը անհրատեսական կլինի, եթե դուք դրա մասնագետը չեք: Նախագիծն արդեն ամբողջությամբ պատրաստ է, որը համապատասխանում է շինարարական բոլոր նորմերին, և եթե ուզում եք առաջարկություններ անել, ապա կարող եք ցանկացած ժամանակ գալ մեր բաղադրաչիսական խումբ և ավելի մոտիկից ծանոթանալ նախագծային լուծումների մանրամասներին և եթե առարկություններ կունենաք խնդրեմ, դրանք կարող եք ներկայացնել մասնագիտական խմբին: Համայնքապետը ևս մեկ անգամ մանրամասնեց նախատեսվող գործունեության արդյունքում նախատեսվող մրցումների անցկացման հնարավորությունները և մարզակները:</p> <p><u>Արթուր Բաջանյան, Արարատ համայնքի կրթության, սպորտի և մշակույթի հարցերով պատասխանատու</u> Ողջունում եմ այս նախաձեռնությունը, որը բավականին փուլեր է անցել՝ հանդիսապումներ, քննարկումներ, նախագծանախաշվային աշխատանքների իրականացում և այլն: Այսօրվա քննարկումը ցույց է տալիս մեր համայնքի ռազմավարությունը և տեսլականը, որ մենք շատ մեծ տեղ ենք տալիս սպորտի զարգացմանը: Արարատը մարզական լուրջ ճանապարհ անցած քաղաք է, բայց ցավոք այս պահին մենք չունենք խաղային մարզակներին համապատասխան տեղ և հնարավորություն: Այս նախագիծը ցանկացած արարատցու համար երազների նման մի բան է՝ ունենալ միջազգային չափանիշերին համապատասխան մարզադաշտեր և մարզադահլիճներ: Մա կխթանակ մարզային և հանրապետական միջոցառումների ներքոսը դեպի մարզ, իսկ մարզիկներին հնարավորություն կտա, որպեսզի իրենց առջև դրված խնդիրները մարսիմում կատարեն: Մենք ունեցել են բասկետբոլի տիմ, որը Հայաստանի կրկնակի չեմպիոն է եղել: Մեզանից յուրաքանչյուրն իր մասով արել է ամեն ինչ, որպեսզի այն նախագիծը կյանքի կոչվի: Եթե մենք ունենանք մեր երազած մարզադահլիճը, վստահ եմ, որ մեր ունեցած նվաճումները, որ ասանանափակ հնարավորությունների պայմաններում տվել ենք եվրոպայի և աշխարհի չեմպիոններ, հաստատ կրկնապատկվելու ու եռապատկվելու են: Ընտրիակալ ենք սկսած մտահաղացումից, նախագծային աշխատանքներն իրականացնողներին, վստահ եմ, որ նաև կառավարությունում այն հավանության կարծանանա և փորձաքննությունը կանցնի, և մենք շատ շուտով ինքներս կունենանք այն կառույցը, որն այս պահին գուցե մի քիչ թղթային է, կամ ոչ այդքան պատկերավոր:</p>
<p>3. <u>Արարատ համայնքի բնակիչ</u></p>	<p><u>Ք.Սահակյան, բնապահպանության մասնագետ</u> Մոտակայքում ուտումնական հաստատություններ կան: Շինարարության ամիսների ընթացքում ինչ-որ մեղմման միջոցառումներ կան համայնքի համար, թե ինչպես պետք է անել, որ ազդեցությունները չխանգարեն կրթական պրոցեսին:</p>

		<p>ընդամենը մի քանիսն են: Բացի այդ նախատեսված է բողոքներ համակարգ, որի շրջանակներում, եթե շինարարության փուլում որևէ խնդրանքներ կամ անհարմարություններ լինեն բնակիչների համար, նրանք ցանկացած ժամանակ այդ հարցով կարող են դիմել քաղաքապետարան: Արված է հնարավորինս, որպեսզի բոլոր բողոքներին և առաջարկություններին պատասխան սրվի կարճ ժամկետներում: Այսինքն բոլոր բնապահպանական և անվտանգային միջոցառումները լինելու են շինարարական կազմակերպության պայմանագրի բաղկացուցի մաս:</p> <p><u>Հրայր Դավթյան, Արարատի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ</u></p> <p>Ես կուզեի մի քանի խոսքով անդրադարձվել հողամասի սրման, տեղադրության և ինչու հենց այդտեղ: տարածք ընտրվել է այդտեղ, քանի որ ունենք մարզադահլիճ, որը գործում է և շենքը տեխնիկապես ամուր շինություն է և իմաս չկար այն քանդել և դրա փոխարեն նորը կառուցել: Դա հաշվի առնելով և նաև այն, որ այդ տարածքը կառուցապատված էր ապօրինի շինություններով, արարատցիները դա շատ լավ գիտեն, որքո քանդվեցին և սպասմունսածվեցին և վերացավ այդ տեսակ և անշուք վիճակը: Շենք այդ ապօրինի շինություններից մաքրված տարածքներում էլ նախատեսված են բացօդյա մարզադաշտերը և տարածքը ֆունկցիոնալ օգտագործվելու է: Ինչպես արդեն նշեց պարոն Ավետիսյանը, հողամասը փոքր էր այսօրվա քաղաքի պահանջներից, և դիմեցինք կառավարություն հողամասի ընդլայնման համար և հարցը ընթացքի մեջ է և շատ շուտով կլուծվի: Նոր մարզադահլիճի մասով էլ նշեմ, որ նորարական տեխնոլոգիաներով կառուցվող մարզադահլիճ է լինելու՝ հավաքովի կրևտրուկցիաներով, որը թույլ է տալիս ավելի արագ իրականացվել շին. աշխատանքները: Նախագծողը ավելի մանրամասն կներակայցնի այն: Այսինքն ունենալու ենք բոլոր չափանիշներին համապատասխանող դահլիճ, որը մեծ խթան կլինի մեր մարզի համար:</p> <p><u>Ալյուշ Մկրտչյան, ԲԻՄ Ինջեկերինգ ՍՊԸ նախագծային ընկերություն</u></p> <p>Նախագծային ընկերության կողմից ևս մեկ անգամ մանրամասնվեցին նախագծային լուծումները: Նշվեց, որ նախագծում վարչական կառավարման համար տարածքներ չեն նախագծվել, հաշվի առնելով, որ այդ կապտակավ օգտագործվելու է արդեն իսկ գոյություն ունեցող շենքը: Մարզադահլիճը նախատեսված է թփով ութ մագաձների համար՝ հիմնական շենքը պատվիրատուի պահանջով, դնելով բասկետբոլի վրա: Մարզադահլիճի համար ընտրված է սպորտային դահլիճի առավելագույն չափերը՝ պրոֆեսիոնալ մրցումներ անցկացնելու համար, որը թույլ է տալիս գույաներ կիրառել յոթ մարզաձևեր: Նախագիծն իրականացված է բոլոր սեյսմիկ և հակահրդեհային նորմերին համապատասխան: Դահլիճն իրականավելու է մետաղական հավաքովի կրևտրուկցիաներով, գունավոր ֆասադներով, որոնք գույնը ժամանակի ընթացքում չի թափվում: Օժանդակ հատվածը է/բ մոնոլիտ կառույց է, հարթ մոնոլիտ ծածկերով, ինչը թույլ է տալիս բոլոր ենթակառուցվածքները տարել առաստաղի տակով: Շենքի ապասարկման և երկարակացության համար տրված են բավականին արդյունավետ լուծումներ: Շենքերն ապահովված են լինելու ժամանակակից նորարական լուծումներով՝ հակահրդեհային, հակառևտնագնահատման համակարգեր, հաշվառումների կառուցվածքների տեղադրում՝ դրանց սեղմելու</p>
--	--	--


	<p>4. <u>Արմեն Հարությունյան, Արարատի ավազանու անդամ</u></p> <p>Ես հարց ունեմ կապված նրա հետ որ ստեղծի, որ շենքը հավաքովի է լինելու, այսինքն իրան երբ ուզենանք կարող ենք հանել:</p> <p>5. <u>Արմեն Հարությունյան, Արարատի ավազանու անդամ</u></p> <p>Պարոն Ավետիսյան, այս ամենը ինչի մասին խոսում ենք տեղավորվում է ձեր ասած 970 մլն. դրամի մեջ:</p> <p>6. <u>Արմեն Հարությունյան, Արարատի ավազանու անդամ</u></p> <p>Այսինքն նախատեսված է 1 դահլիճ 8 մարզաձևերի համար:</p> <p>7. <u>Արարատ համայնքի բնակիչ</u></p> <p>Նշված 2133 ք.մ. մակերեսից ինչքան է շենք-շինություն, ինչքան է բաց հատվածը և կանաչապատ հատվածը:</p> <p>8. <u>Արարատ համայնքի բնակիչ</u></p> <p>Մի հատ էլ հարց կապված մարզադահլիճի աղբիկների, տղաների ու հաշվառումների</p>	<p>հնարավորությամբ, դրանի ու դահլիճների փեղկերի ավտոմատ բացման-փակման հնարավորություններ, տակիքների վրա շանթարգելների տեղադրում: Օգտագործվող բոլոր կուրթերը գերժամանակակից են, մեքենային ծածկերով: Վարչական շենքն արտաքին հարդարումը նախատեսված է ֆիբրոցեմենտ գործարանային արտադրության գունավոր սալերով: Գունավորումն ընտրվել է պատվիրատուի հետ: Այդ սալերը ժամանակի ընթացքում չեն խամրում: Ֆասադները օդափոխվող, տաքացվող են, տարածքում առկա են կանաչապատ տարածքներ, բասկետբոլի բացօդյա դաշտեր, կա նաև թենիսի դաշտ իր սպասակող օժանդակ տարածքներով, նստարաններ, բացօդյա տարածքում տրինամոնտեր, որոնցից կարող են օգտվել նաև հարակից տարածքի բնակիչները: Ամբողջ տարածքը ցանկապատված և առանձնացված է լինելու, իսկ շենքի ձայնամեկուցացումը բավականին բարձր է, ինչի արդյունքում ներսում անցկացվող մրցումները որևէ կերպ չեն կարողանա խանգարել հարակից դպրոցում ընթացող դասապրոցեանին:</p> <p><u>Արարատի համայնքապետ Ա. Ավետիսյանը հավելեց.</u></p> <p>Շենքի ավարտից հետո կամ միգուցե շինարարության ընթացքում նախատեսում ենք տակիքին տեղադրել նաև արևային վառարաններ, որը հնարավորություն կտա ամբողջովին ապահովելու շենքի էներգամատակարարումը, քանի որ շենքի ջեռուցումը նախատեսված է էլեկտրական տաքացուցիչներով: դա թույլ կտ կրճատել հետագա շահագործման ծախսերը:</p> <p>Ոչ, այն լինելու է հավաքովի կրևտրուկցիաներից: Տեսեք երբ օրինակ տրբունան լինում է է/բ կրևտրուկցիաներից ապա այն առաջնորդար է: Մեզ մոտ նախատեսված է տրիբունան մարզագույքի ձեռքբերումով, որը հաստակների աշխատանքների ավարտից հետո հավաքում են ու տեղում մնում է: Բայց եթե կարիք կա, կարելի է 1-2 շարքը հանել և տեղափոխել ավելի հեռու, եթե հատուկ միջոցառումներ են անցկացվում:</p> <p><u>Ա. Ավետիսյան Արարատի համայնքապետ</u></p> <p>Խաղայիններին կա, բայց մարզագույքի կա նախատեսված չի:</p> <p><u>Ա. Ավետիսյան Արարատի համայնքապետ</u></p> <p>Պարապունների համար ամեն ինչ կա հարմարացված առանձին տեղերով, իսկ մրցումներն անցկացվելու են մարզադահլիճում, որը հարմարեցվում է տվյալ մարզաձևին:</p> <p>Դահլիճն այնքան մեծ է, որ եթե կարիքը ունենանք, օրինակ ըմբշամարտի ժամանակ կարող ենք ոչ թե մեկ, այլ երկու-երեք գորգ փեղկ նսյնն էլ դնելը: Դահլիճը կառավելա դահլիճ է լինում տարբեր միջոցառումներ անվկացնելու համար:</p> <p><u>Ք. Սահակյան, բնապահպանության մասնագետ</u></p> <p>622 ք.մ. մակերեսով նախատեսված են սիզամարգերի ստեղծում, բացի այդ լինելու են դեկորատիվ ծառեր և թփեր, իսկ նշված 2133 ք.մ. Դա բուն կառուցապատման մակերեսն է:</p> <p>Մտավորապես 44%-ը լինում է շենք շինությունը, իսկ մնացածը բացօդյա մարզադաշտերն ու կանաչապատ տարածքներն իրենց բարեկարգումներով՝ նստարաններ, լուսավորություն և այլն: 476 ք.մ. էլ ունի ներկայիս գործող մարզադահլիճի շենքը:</p> <p>Տիգրան Արմենակյան, մարզադպրոցի տնօրեն</p> <p>Այս պահին մենք պայմաններ չունենք աղջիկների համար, քանի որ հանդերձարանները փոքր են, տեղ չկա: Աղջիկների հոսք լինում է, ուզում են, բայց որ պայմաններ չունենք, չենք կարողանում ընդունել:</p>
--	--	--

կապված: Կա արդյոք վիճակագրություն, թե այս վերջին տարիներին օրինակ քանի աղջիկ շրջանավարտ ունենք և արդյոք հաշվանդամներ կան, թե ոչ:	կապված: Դահլիճը այնքան խիտ ու հագեցած է ժամերով, որ մենք չենք կարողանում այն տրամադրել առաձին աղջիկների խմբերին կամ հաշվանդամներին և բացի այդ էլ հարմարեցված չի հաշվանդամների պահանջներին:
---	---

Հանդիպումն ամփոփեց Արարատի համայնքապետը՝ շնորհակալություն հայտնելով հանդիպման մասնակիցներին և նշեց, որ առաջիկա ավագանու նիստին կտրվի նաև ավագանու դիրքորոշումը նախատեսված գործունեության իրականացման վերաբերյալ և ըստ դրա էլ կշարժվենք առաջ:


Մասնակիցների ցուցակը և հանրային քննարկման տեսաձայնագրությունը ներկայացվում են սույն արձանագրությանը կից:

Քննարկումների պատասխանադրո՝



Հ. Մկրտչյան,
Արարատի համայնքապետարանի
քարտուղարության, անձնակազմի
կառավարման և տեղեկատվական
տեխնոլոգիայի բաժնի գլխավոր
մասնագետ

Արձանագրող՝



Ք. Սահակյան,
քննապահականության մասնագետ

Ձեռնարկող և վարող՝



Ա. Ալեքոսյան, Արարատի
համայնքապետ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

« 09 » փետրվար, 2024

Արարատի մարզի Արարատ համայնքի Շահումյան փողոց 46 հասցեում փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման նախագծի վերաբերյալ (1-ին փուլի հանրային քննարկում)

Մասնակիցների ցուցակ

	Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
1.	Բրեզդիսյան Արթուրյան	Բնակավայրի ծառայության ղեկավար	094529327	
2.	Մարտիրոսյան Վահագն	Կառուցման ղեկավար	098996330	
3.	Սարգսյան Բենամին	Կառուցման ղեկավար	098085598	
4.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	094436210	
5.	Գրիգորյան Արմեն	Ամբիոնի անդամ	093157573	
6.	Սարգսյան Բենամին	Ամբիոնի անդամ	092233626	
7.	Մարտիրոսյան Վահագն	Ամբիոնի անդամ	014-77-4577	
8.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	055-854-854	
9.	Գրիգորյան Վահագն	Կառուցման ղեկավար	077-76-07-76	
10.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	094323429	
11.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	099-91-01-60	

	Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
12.	Բրեզդիսյան Արթուրյան	Բնակավայրի ծառայության ղեկավար	098918819	
13.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	093009175	
14.	Սարգսյան Բենամին	Կառուցման ղեկավար	093575231	
15.	Մարտիրոսյան Վահագն	Ամբիոնի անդամ	094835951	
16.	Գրիգորյան Վահագն	Ամբիոնի անդամ	055-98-58-18	
17.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	099-58-98-58	
18.	Սարգսյան Բենամին	Ամբիոնի անդամ	077-42-29-26	
19.	Գրիգորյան Վահագն	Ամբիոնի անդամ	085-33-55-11	
20.	Սարգսյան Բենամին	Ամբիոնի անդամ	077-273899	
21.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	097306711	
22.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	093-200-317	
23.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	093-50-55-80	
24.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	093-362863	
25.	Մանուկյան Արմեն	Ամբիոնի անդամ	093-99-1616	

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

« 09 » փետրվար, 2024

Արարատի մարզի Արարատ համայնքի Շահումյան փողոց 46 հասցեում փակ ունիվերսալ մարզադահլիճի կառուցման նախագծի վերաբերյալ (1-ին փուլի հանրային քննարկում)

Մասնակիցների ցուցակ

	Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
1.	Խաչի Խոփանշիպուհ	ՋԻՀ Կանադայի Տարբեր	093-78-81-98	
2.	Զ. Բրույան Զ. Բրույան	Ծայր բաժնի Տարբեր	093-1286 10	
3.	Օրջանյան Դավիթ	Ծանրաճարձի Տարբեր	093 1993 18	
4.	Գևորգյան Զևարդ	Բույսերաբույժի Տարբեր	094 646806	
5.	Լավու Վահրանյան	բրեստայր	098 34 2921	
6.	Վերալյալու Վերալյալու	Վերալյալու	077744350	
7.	Գրիգորյան Գրիգորյան	Գրիգորյան	047 232522	
8.	Խաչատրյան Լիլիթ	Տարբեր	077044472	
9.	Խաչատրյան Վահրանյան	գործազուրկ	093483605	
10.	Վարդանյան Վարդանյան	Տարբեր	094164872	
11.	Խաչատրյան Գրիգորյան	Սահմանափակ ընկերություն	094-01-8577	

	Անուն, Ազգանուն	Պաշտոն	Հեռախոս	Ստորագրություն
12.	Չեղիկյան Ե. Առնոսյան	Խաչատրյանի Տարբեր	093-59-36-10	
13.	Չառնայան Գևորգյան	Սեյմաբեկյան	093251839	
14.	Խաչատրյան Խաչատրյան	Խաչատրյանի Տարբեր	098840182	
15.	Նուբար Խաչատրյան	Խաչատրյանի Տարբեր	098116969	
16.	Գևորգյան Վարդանյան	Առնոսյանի Տարբեր	094442013	
17.	Մկրտչյան Վահրանյան	Վահրանյանի Տարբեր	091333884	
18.				
19.				
20.				
21.				
22.				
23.				
24.				
25.				